ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2022

02.2022
Փետրվար

03.2022

04.2022

05.2022

06.2022

07.2022

08.2022

09.2022

10.2022

11.2022

12.2022

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 30-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2022

Փետրավ

թիվ 2 (282)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՕ-12-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

13 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՅՈՒՓԵՅ» ՓԲԸ ՎԿ «Կենտրոն 6» մասնաճյուղը հաշվառումից հանելու մասին

13 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԻՆՌԻՄ ԿՐԵԴԻՏ», «ԼԵՅԼՈ» ՍՊԸ-ների գրավատնային գործունեության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

13 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԹԻՄ ՓԵՅ» ՓԲԸ ՎԿ «Նժդեհ», «Նոր Արեշ», «Աջափնյակ», «Կոմիտաս 1», «Սաֆարյան», «Ամիրյան» և «Հյուսիսային» մասնաճյուղերը հաշվառելու մասին

13 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՍԱՆ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին, «Անդակո» ՍՊԸ թիվ 4 մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին

13 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ «Եղեգնաձոր», «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ «Մարտակերտ», ««Ջի Ընդ Էյ» ՈՒՎԿ ՍՊԸ «Փեթակ» մասնաճյուղերը գրանցելու մասին

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 13Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 5-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 205-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 6-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

18 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 7-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 20-Ն որոշումը ««Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի հատուկ բանկային հաշիվը, դրանում ներդրված միջոցների օգտագործման ուղղությունները, դեպքերը և պայմանները» կանոնակարգ 4/23-ը հաստատելու մասին»

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 21-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 22-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

26 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 23-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին»

28 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 24-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

43 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 25-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

44 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 26-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մայիսի 25-ի թիվ 80-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին»

49 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 27-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

51 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 28-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

53 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 30-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 53-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

55 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

*«Անկանխիկ գործառնությունների մասին»**

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների օտարման, գույքի օտարման, ապրանքների օգտագործման, գույքի օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքների դիմաց, աշխատավարձերի, կրթաթոշակների, կենսաթոշակների, նպաստների, փոխառությունների, ներկայացուցչական ծախսերի, գործուղման նպատակով կատարվող անկանխիկ ձևով վճարումների, ինչպես նաև անկանխիկ գործառնությունների հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ֆիզիկական անձանց, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կազմակերպությունների, օտարերկրյա կազմակերպությունների, օտարերկրյա կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների, պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների վրա:

2. Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում կնքված (գրավոր և բանավոր) և դրանց դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում փաստացի վճարում նախատեսող (փաստացի վճարված) գործարքների վրա, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված, սակայն Հայաստանի Հանրապետության տարածքում վճարում նախատեսող (փաստացի վճարված) գործարքների վրա:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում կիրառվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1) անկանխիկ ձևով գործառնություն (վճարում)՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին, կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում, անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է համարվում նախաձեռ-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2022 թվականի հունվարի 1-ին (ՀՀՊՏ, 08.02.2022):

նողի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը).

2) կրպակ՝ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված առևտրի օբյեկտի տեսակ.

3) աշխատավարձ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ, ինչպես նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված պայմանագրային եկամուտ.

4) կանխիկ ձևով գործառնություն (վճարում)՝ սույն օրենքով սահմանված՝ անկանխիկ չհանդիսացող վճարում.

5) կանխիկ դրամ՝ Հայաստանի Հանրապետության արժույթն ու արտարժույթը՝ թղթադրամների կամ մետաղադրամների տեսքով.

6) ֆիզիկական անձ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի, երկքաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ.

7) կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) իրավաբանական անձ, դրա՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ, օտարերկրյա կազմակերպություն, օտարերկրյա կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առանձնացված ստորաբաժանում.

8) վճարային քարտ կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքեր՝ ՊՈՍ-տերմինալ և այլ նմանատիպ սարքեր, որոնք հնարավորություն ունեն ընդունելու անկանխիկ ձևով վճարում.

9) անհատ ձեռնարկատեր՝ ըստ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության.

10) նոտար՝ ըստ «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված նշանակության.

11) էլեկտրոնային փող, վճարային քարտ, վճարային գործիք՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված նշանակության.

12) փաստաբան՝ ըստ «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված նշանակության.

13) պետական կառավարման համակարգի մարմիններ՝ ըստ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքով սահմանված նշանակության.

14) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ ըստ «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» օրենքով սահմանված նշանակության.

15) բանկ՝ ըստ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով սահմանված նշանակության.

16) ապահովագրական ընկերություն՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքով սահմանված նշանակության.

17) վարկային կազմակերպություն՝ ըստ «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքով սահմանված նշանակության.

18) գրավատուն՝ ըստ «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» օրենքով սահմանված նշանակության:

Հոդված 4. Անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և կազմակերպությունների կողմից անկանխիկ ձևով գործարքների իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից 2022 թվականի հուլիսի 1-ից 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ապրանքների օտարման, գույքի օտարման, ապրանքների օգտագործման, գույքի օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված պասիվ եկամուտների վճարման, փոխառությունների տրամադրման և ստացման գործարքների, եթե դրանց մի կողմը ֆիզիկական անձ է, դիմաց վճարումը և վճարի ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե սույն օրենքով և այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր և այլ բացառություններ նախատեսված չեն: Բացառություն են կազմում նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից մանրածախ առևտրում սահմանված կարգով դուրս գրված՝ ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվով ձևակերպված ապրանքների ձեռքբերման գործարքները, որոնց դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը չի կիրառվում:

2. Օտարերկրյա կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների, կազմակերպությունների, ֆիզիկական անձանց միջև իրականացվող ցանկացած գործարքի դիմաց վճարումը և վճարի ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե վճարումը կամ վճարի ստացումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Փաստաբանական ծառայությունների, ինչպես նաև բոլոր խորհրդատվական (հաշվապահական, աուդիտորական, իրավաբանական, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ խորհրդատվական) ծառայությունների մատուցման վճարների ընդունումն իրականացվում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

4. Նոտարական գործողությունների իրականացման կամ նոտարի մատուցած ծառայությունների վճարների ընդունումն իրականացվում է անկանխիկ ձևով: Նոտարական գործողություններ կատարելու համար պետական տուրքը նոտարը գանձում է անկանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:

5. Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և կազմակերպությունների միջև իրականացվող ցանկացած գործարքի դիմաց վճարումը և վճարի ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից:

6. Բանկերի, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերը և փոխառությունները տրամադրվում են բացառապես անկանխիկ ձևով: Բանկերը ավանդները կարող են ընդունել և հետ վերադարձնել (ներառյալ տոկոսները) նաև կանխիկ ձևով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ պայմանագրով: Բանկերի, վարկային կազմակերպությունների տրամադրած վարկերը կարող են մարվել (հետ վերադարձվել) նաև կանխիկ

ձևով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ պայմանագրով, իսկ բանկերի, վարկային կազմակերպությունների տրամադրած փոխառությունները մարվում են (հետ են վերադարձվում) բացառապես անկանխիկ ձևով:

7. Գրավատները վարկերը տրամադրում են բացառապես անկանխիկ ձևով 2022 թվականի հուլիսի 1-ից՝ 80,000 Հայաստանի Հանրապետության դրամից ավելի տրամադրվող վարկերը, 2023 թվականի հունվարի 1-ից՝ 50,000 Հայաստանի Հանրապետության դրամից ավելի տրամադրվող վարկերը, 2024 թվականի հունվարի 1-ից՝ 20,000 Հայաստանի Հանրապետության դրամից ավելի տրամադրվող վարկերը:

8. Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը, նոտարները և փաստաբաններն իրավունք չունեն անկանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների օտարման, գույքի օտարման, ապրանքների օգտագործման, գույքի օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում) առաջարկելու և (կամ) ստանալու ավելի բարձր գին (արժեք), քան առաջարկում և (կամ) ստանում են կանխիկ ձևով վճարում նախատեսող ապրանքների օտարման, գույքի օտարման, ապրանքների օգտագործման, գույքի օգտագործման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքներում (պայմանագրերում) կամ գործարքների (պայմանագրերի) առաջարկներում (օֆերտաներում):

9. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն օրենքով սահմանված անկանխիկ գործառնությունների համար միջնորդավճարների առավելագույն և նվազագույն սահմանաչափերը, ինչպես նաև դրանց վճարման դեպքերը, կարգը և պայմանները:

Հոդված 5. Ֆիզիկական անձանց միջև անկանխիկ ձևով գործարքների իրականացումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական անձանց միջև 2022 թվականի հուլիսի 1-ից 500,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող վճարումը և վճարման ստացումը բոլոր այն գործարքների դիմաց, որոնց արդյունքում ծագող իրավունքները ենթակա են պարտադիր գրանցման, իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, եթե այլ օրենքներով այդ գործարքների դիմաց վճարման ավելի ցածր սահմանաչափեր նախատեսված չեն, ինչպես նաև ֆիզիկական անձանց միջև 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող փոխառությունների տրամադրումը և ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական անձանց միջև 2023 թվականի հուլիսի 1-ից 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող վճարումը և վճարման ստացումը բոլոր գործարքների համար իրականացվում են անկանխիկ ձևով:

Հոդված 6. Աշխատավարձի, կենսաթոշակի և այլ վճարումների կանխիկ ձևով վճարման սահմանափակումները

1. Օրենքով կամ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձերը վճարվում են անկանխիկ ձևով 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում գործու-

նեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից: Հաշմանդամության կարգ ունեցող անձի գրավոր դիմումի հիման վրա նրա աշխատավարձը կարող է վճարվել կանխիկ ձևով:

2. Պետական կամ համայնքային բյուջեներից և այդ բյուջեներ կատարվող ցանկացած վճարում իրականացվում է անկանխիկ ձևով: Կառավարությունը կարող է սահմանել սույն մասից բացառություն կազմող այն վճարների տեսակները և այդպիսի վճարներ ստացողների առանձին կատեգորիաների ցանկը, որոնք կարող են վճարել, կամ որոնց կարող է վճարվել կանխիկ ձևով:

3. Կրթաթոշակները, ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումները, գործուղման նպատակով կատարվող վճարումները, պետական գնումների հետ կապված վճարումները կատարվում են անկանխիկ ձևով՝ սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից:

4. Սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող բժշկական կազմակերպություններում (հաստատություններում) մատուցված բոլոր բժշկական ծառայությունների դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:

5. Սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ Երևան քաղաքում, 2023 թվականի հուլիսի 1-ից՝ Հայաստանի Հանրապետության մարզերի վարչական կենտրոններում, 2024 թվականի հուլիսի 1-ից՝ այլ բնակավայրերում գործունեություն իրականացնող ուսումնական (այդ թվում՝ բարձրագույն ուսումնական) հաստատություններում մատուցված բոլոր կրթական ծառայությունների դիմաց կատարվող վճարներն ընդունվում են անկանխիկ ձևով:

6. Ապահովագրական հատուցումները կատարվում են անկանխիկ ձևով:

7. Սկսած 2022 թվականի հուլիսի 1-ից՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գործունեության հետ կապված բոլոր գործառնությունները (վճարումների կատարումը և վճարումների ստացումը) իրականացնում են անկանխիկ ձևով, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

8.Կենսաթոշակները, կենսաթոշակների համար սահմանված կարգով վճարվող պետական նպաստները և այլ դրամական վճարները, ինչպես նաև խնամքի նպաստը

վճարվում են «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» օրենքներով սահմանված կարգով: «Պետական կենսաթոշակների մասին», «Պետական նպաստների մասին» օրենքներով կենսաթոշակը, կենսաթոշակների համար սահմանված կարգով վճարվող պետական նպաստները և այլ դրամական վճարներ, ինչպես նաև խնամքի նպաստը կանխիկ ձևով վճարելու համար բացառություններ կարող են սահմանվել Կենտրոնական բանկի և աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համատեղ նորմատիվ իրավական ակտով:

Հոդված 7. Գործարքի (պայմանագրի) մասնատումը և անվավերությունը

1. Սույն օրենքի պահանջներից խուսափելու և դրանք չկատարելու նպատակով մասնատված (երկու կամ ավելի մասերի բաժանված) գործարքը (պայմանագիրը) համարվում է մեկ միասնական գործարք (պայմանագիր), և դրանց վրա տարածվում են սույն օրենքի դրույթները:

2. Սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր չէ, սակայն սույն օրենքով սահմանված գումարի չափը գերազանցող կանխիկ ձևով իրականացվող վճարման և վճարման ստացման հետևանքով գործարքի կողմերի միջև վեճ առաջանալու դեպքում վերջիններս զրկվում են ի հաստատումն գործարքի և դրա պայմանների՝ վկայի ցուցմունքները վկայակոչելու իրավունքից:

Հոդված 8. Արտարժույթով արտահայտված գործարքի (պայմանագրի) և սույն օրենքով սահմանված վճարների հաշվարկը

1. Սույն օրենքով սահմանված վճարները, բացառությամբ քարտային կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներով կատարված վճարումների, արտարժույթով վճարելիս դրանց հաշվարկը սույն օրենքով սահմանված նպատակներով կատարվում է՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի սահմանած և հրապարակած միջին փոխարժեքը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

Հոդված 9. Վճարային քարտեր ընդունող սարքերի կիրառումը

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու պարտավորություն ունեցող, ինչպես նաև օդային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների տոմսերի վաճառք իրականացնող սուբյեկտները պետք է ունենան և հաճախորդի ցանկությամբ ապահովեն վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով վճարման ընդունում, բացառությամբ կրպակների:

2. Կառավարությունը կարող է սահմանել այն պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասում չնշված սուբյեկտների ցանկը, որոնք պարտադիր պետք է տեղադրեն և կիրառեն վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքեր:

3. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի անսարքության դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ սեղմ ժամկետներ նախատեսված չեն Կենտրո-

նական բանկի նորմատիվ իրավական ակտերով, ապա սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված սուբյեկտները պարտավոր են վերանորոգել կամ փոխարինել տվյալ սարքը: Եթե վճարային քարտերով կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներով վճարման ընդունումն իրականացվում է հսկիչ դրամարկղային մեքենաներ կիրառելու միջոցով, ապա դրանց անսարքության դեպքում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված սուբյեկտները պետք է առաջնորդվեն Կառավարության որոշմամբ հաստատված կանոններով:

4. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի սպասարկումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով:

5. Վճարային քարտեր կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքներ ընդունող սարքերի և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների վերաբերյալ, ինչպես նաև անկանխիկ գործառնությունների հետ կապված այլ տեղեկությունների փոխանակումը Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի միջև իրականացվում է Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի համատեղ նորմատիվ իրավական ակտով:

ԳԼՈՒԽ 2
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10. Օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների նկատմամբ վերահսկողությունը

1. Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների, ֆիզիկական անձանց և նոտարների կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, բացառությամբ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված, գրանցված և (կամ) վերահսկվող անձանց նկատմամբ իրականացվող վերահսկողության և աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերի: Ընդ որում, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների և փաստաբանների միջև գործարքների դեպքում սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելն առաջացնում է պատասխանատվություն գործարքի բոլոր կողմերի համար, իսկ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանների և ֆիզիկական անձանց միջև գործարքների դեպքում պատասխանատվություն է առաջանում միայն կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների համար, բացառությամբ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու դեպքերի:

2. Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված, գրանցված և (կամ) վերահսկվող անձանց կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Կենտրոնական բանկը՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների, որոնք պարունակում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր, պահպանման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում և պատասխանատվության միջոցներ է կիրառում Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը:

Հոդված 11. Օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի խախտման համար պատասխանատվությունը

1. Սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների, բացառությամբ այն նորմերի, որոնք պարունակում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների և նոտարների կողմից խախտման դեպքում կիրառվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված պատասխանատվություն, իսկ ֆիզիկական անձանց կողմից սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտման դեպքում կիրառվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

2. Սույն օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները, որոնք պարունակում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, փաստաբանների, նոտարների և ֆիզիկական անձանց կողմից խախտելու դեպքում կիրառվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցներ:

Հոդված 12. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահի լիազորությունները կատարող Ա. Սիմոնյան
8 փետրվարի 2022 թ., Երևան, ՀՕ-12-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Հաշվառումից հանվել է*** «ՅՈՒՓԵՅ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Կենտրոն 6» մասնաճյուղը (որոշում թիվ 14Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԻՆՌԻՄ ԿՐԵԴԻՏ», «ԼԵՅԼՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատնային գործունեության լիցենզիաները (որոշումներ թիվ 31Ա, 32Ա):
- ***Հաշվառվել են*** «ԹԻՄ ՓԵՅ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Նժդեհ», «Նոր Արեշ», «Աջափնյակ», «Կոմիտաս 1», «Սաֆարյան», «Ամիրյան» և «Հյուսիսային» մասնաճյուղերը (որոշում թիվ 35Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՍԱՆ ՖՈՒԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, «Անդակո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 4 մասնաճյուղին (որոշումներ թիվ 36Ա, 37Ա):
- ***Գրանցվել են*** «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Եղեգնաձոր», «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Մարտակերտ», ««Ջի Ընդ Էյ» ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Փեթակ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/52Ա, 1/62Ա, 1/74Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2022 թ. փետրվարի 1-ի թիվ 13Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 8.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 9.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 6.5%:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 205-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հոկտեմբերի 6-ի ««ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի աբոնենտներին ներկայացվող անվտանգության պահանջները» հաստատելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 327-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 205-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
31 հունվարի 2022 թ., Ն 5-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. հունվարի 25-ին (ՀՀԳՏ, 02.02. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու ապահովագրական ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող տարրերը, բարձրացնելու ապահովագրական ընկերությունների ռիսկերի կառավարման արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգի 2-րդ կետի 11-րդ ենթակետում «համախառն ապահովագրավճարների» բառերից հետո լրացնել «՝ նվազեցրած դադարեցված (լուծված) ապահովագրության պայմանագրերի գծով վերադարձված և վերադարձման ենթակա ապահովագրավճարների գումարի չափով» բառերը:
2) Կանոնակարգի 27-րդ կետում.
   ա. «400%» բոլոր թվերը փոխարինել «100%» թվերով,
   բ. «830% և 800%» թվերը փոխարինել «150%» թվով:
3) Կանոնակարգի 28.1-րդ կետում «վնասման դեպքում ընկերության պարտավորության չափն է» բառերից հետո լրացնել «(առանց նվազեցնելու ապահովագրության պայմանագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը)» բառերը:
4) Կանոնակարգի հավելված 1-ի 3-րդ կետում.
   ա. 3-րդ ենթակետում «սեփականությունը համարվելու յոթերորդ ամսվանից սկսած,» բառերից հետո լրացնել «ինչպես նաև օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով՝ այդ ակտիվները ապահովագրական գործունեության համար չօգտագործվող ճանաչվելու օրվանից վեց ամիս հետո,» բառերը,

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. հունվարի 25-ին (ՀՀԳՏ, 02.02.2022):

բ. 4-րդ ենթակետում «այլ հիմնական միջոցների) հաշվեկշռային արժեքի» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև ապահովագրական գործունեության համար օգտագործվող օգտագործման իրավունքի ձևով ակտիվների (հիմքում՝ հիմնական միջոցներ) և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի» բառերը,

գ. 5-րդ ենթակետից հանել «վարձակալված կամ» բառերը:

5) Կանոնակարգի հավելված 1-ի ենթահավելված 1.2-ում 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Անկախ սույն Հավելվածի 1-ին կետի 18-րդ ենթակետով սահմանված փոխարկման կարգի՝ նախքան փոխառության գումարը (կամ դրա մի մասը) ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկելը, փոխատուն (փոխկապակցված անձինք) պետք է ստանա (ստանան) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» Կանոնակարգ 3/01-ի համաձայն ապահովագրական ընկերության նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը, եթե փոխառության ներգրավման արդյունքում հետևյալ ցուցանիշը (Ց) գերազանցում է 10, 20 կամ 50 տոկոսը՝

$$Ց = \frac{ՍՓ + ԲԱ_{ՓՈԽ}}{ԲԱ + ՍՓ} * 100\%$$

որտեղ՝

ՍՓ - փոխատուի (փոխկապակցված անձանց) կողմից ապահովագրական ընկերությանը տրամադրված երկարաժամկետ ստորադաս փոխառության (փոխառությունների) գումարն է,

ԲԱփոխ - փոխատուի (փոխկապակցված անձանց)՝ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած ձայնի իրավունք տվող մասնակցության (առկայության դեպքում) անվանական արժեքն է,

ԲԱ - ապահովագրական ընկերությանը՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի անվանական արժեքն է:

Ընդ որում, սույն կետով սահմանված ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի հաշվարկում չեն ընդգրկվում այն արտոնյալ բաժնետոմսերը, որոնք ձայնի իրավունք են տալիս միայն օրենքով սահմանված որոշ դեպքերում:»:

6) Կանոնակարգի հավելված 2-ի Գլուխ 1-ի 2-րդ կետում «ՊԿանդերռայթինգ =∑ijԿորրij *ՊԿi*ՊԿj» բառերը փոխարինել «ՊԿանդերռայթինգ = $\sqrt{\sum_{ij} Կոր_{ij} * ՊԿ_i * ՊԿ_j}$» բառերով:

7) Կանոնակարգի հավելված 2-ում Աղյուսակ 1-ի 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

31.	Պահանջներ օտարերկրյա վերաապահովագրողների նկատմամբ, ներառյալ օտարերկրյա վերաապահովագրողների բաժինը տեխնիկական պահուստներում	Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ «AAA»-ից «AA-» 20 «A+»-ից «BBB-» 50 «BB+»-ից «B-» 100 «B-»-ից ցածր 150 Մուդիզ «Aaa»-ից «Aa3» 20 «A1»-ից «Baa3» 50 «Ba1»-ից «B3» 100 «B3»-ից ցածր 150	Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ «AAA»-ից «AA-» 20 «A+»-ից «BBB-» 50 «BB+»-ից «B-» 100 «B-»-ից ցածր 150 Մուդիզ «Aaa»-ից «Aa3» 20 «A1»-ից «Baa3» 50 «Ba1»-ից «B3» 100 «B3»-ից ցածր 150

		Ա.Մ.Բեստ «A++»-ից «A+» 20 «A»-ից «B+» 50 «B»-ից «C+» 100 «C+»-ից ցածր 150 վարկանիշ չունեցող 100	Ա.Մ.Բեստ «A++»-ից «A+» 20 «A»-ից «B+» 50 «B»-ից «C+» 100 «C+»-ից ցածր 150 վարկանիշ չունեցող 100

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

31 հունվարի 2022 թ., N 6-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնելու ապահովագրական ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի 85-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե», «իա» կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի ««Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ը հաստատելու մասին» թիվ 366-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների ձևերը, դրանցում ներառվող տեղեկատվությունը, ներկայացնելու կարգը և ժամկետները» կանոնակարգ 3/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 31-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«31. Թիվ 2 հաշվետվության 1-ին աղյուսակի 4-րդ սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կնքված ապահովագրության պայմանագրերի քանակը:»:

2) Կանոնակարգի 64.1-րդ կետում «28-րդ կետի» բառերը փոխարինել «28.1-րդ կետի» բառերով:

3) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 159.1-րդ և 159.2-րդ կետերով.

«159.1. Թիվ 10 հաշվետվության 1-ին հատվածի «Ռեինս Դեդաքթ Թայփ Ստոկ (REINS_DEDUCT_TYPE_STOCK)» տարրում ներկայացվում է վերաապահովագրված գործող ապահովագրության պայմանագրերի գծով առկա չհատուցվող գումարի տեսակը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

159.2. Թիվ 10 հաշվետվության 1-ին հատվածի «Ռեինս Դեդաքթ Ստոկ (REINS_DEDUCT_STOCK)» տարրում ներկայացվում է վերաապահովագրված գործող ապահովագրության պայմանագրերի գծով սահմանված չհատուցվող գումարներից առավելագույնը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:»:

4) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 176.1 և 176.2 կետերով.

«176.1. Թիվ 10 հաշվետվության 1-ին հատվածի «Ռեինս Դեդաքթ Թայփ Ֆլոու (REINS_DEDUCT_TYPE_FLOW)» տարրում ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանում վերաապահովագրված ապահովագրության պայմանագրերի գծով առկա չհատուցվող գումարի տեսակը:

* *Ոչ պաշտոնական հրապարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. հունվարի 25-ին (ՀՀԳՏ, 02.02.2022):

176.2. Թիվ 10 հաշվետվության 1-ին հատվածի «Ռեինս Դեդաքթ Ֆլոու (REINS_DEDUCT_FLOW)» տարրում ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանում վերաապահովագրված ապահովագրության պայմանագրերի գծով սահմանված չհատուցվող գումարներից առավելագույնը՝ ըստ սույն կանոնակարգի 172-րդ և 173-րդ կետերի տրամաբանության:»:

5) Կանոնակարգի 227-րդ կետում «39» թիվը փոխարինել «42» թվով:

6) Կանոնակարգի 228-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«228. Թիվ 16 հաշվետվության 5-րդ աղյուսակում ներկայացվում է վնասաբերության միջին ցուցանիշի հաշվարկն՝ ըստ ապահովագրության դասերի: Աղյուսակի 2-րդ սյունակում արտացոլվում են տվյալ տարվա ընթացքում տվյալ ապահովագրության դասի գծով հաշվեգրված ապահովագրական հատուցումները (նվազեցված վերաապահովագրողների մասնաբաժնի չափով), 3-րդ սյունակում արտացոլվում են տվյալ տարվա ընթացքում տվյալ ապահովագրության դասի գծով կարգավորման ծախսերը, 4-րդ սյունակում արտացոլվում է տվյալ տարվա ընթացքում պահանջների պահուստի (նվազեցված պահանջների պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով) մեծության փոփոխությունը: 5-րդ և 6-րդ սյունակներում արտացոլվում են, համապատասխանաբար, ՎԱտ և ՎՆտ տարրերը՝ հաշվարկած կանոնակարգ 3/03-ի Գլուխ 10-ում սահմանված կարգով: Հաշվետվության 5-րդ աղյուսակում վերլուծվող ժամանակաշրջանի «1-ին տարի» տողում լրացվում են հաշվետու տարվան նախորդող տարվա ցուցանիշները, իսկ «14-րդ տարի» տողում՝ հաշվետու տարվան նախորդող 14-րդ տարվա ցուցանիշները (մյուս տողերը համապատասխանաբար նույն սկզբունքով՝ աճողական կարգով): Եթե օրինակ՝ ապահովագրական ընկերությունը գործունեություն է ծավալել 1996-2011 թվականներին և 2011 թվականը հաշվետու տարին է, ապա հաշվետվության «1-ին տարի» տողում լրացվում են 2010 թվականի ցուցանիշները, իսկ «14-րդ տարի» տողում՝ 1997 թվականի ցուցանիշները: Հաշվետվության 5-րդ աղյուսակում գործունեությունը սկսելու տարվանից առաջ ընկած տարիների համար նախատեսված համապատասխան վանդակներն (բջիջներ) անհրաժեշտ է թողնել դատարկ (չլրացնել 0-ներ):»:

7) Կանոնակարգի 257-րդ կետում «47» թիվը փոխարինել «45» թվով:

8) Կանոնակարգի հավելված 2-ի Աղյուսակի 1-ի 6-րդ՝ «Կնքված պայմանագրերի համարներ» սյունակը հանել:

9) Կանոնակարգի հավելված 3-ի 9-12-րդ աղյուսակները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

10) Կանոնակարգի հավելված 9-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:

11) Կանոնակարգի հավելված 16-ի աղյուսակ 5-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 3-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի փետրվարի 20-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

31 հունվարի 2022 թ., N 7-Ն

*«Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի հատուկ բանկային հաշիվը, դրանում ներդրված միջոցների օգտագործման ուղղությունները, դեպքերը և պայմանները» կանոնակարգ 4/23-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ապահովելու քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման ընթացքում վճարումների սահուն և ապահով իրականացման նախապայմանները՝ նախատեսելով հատուկ բանկային հաշիվ քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի համար, ինչպես նաև սահմանելով այդ հաշվում ներդրված միջոցների օգտագործման հստակ ուղղությունները, դեպքերը և պայմանները,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.1-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 1-ին կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի հատուկ բանկային հաշիվը, դրանում ներդրված միջոցների օգտագործման ուղղությունները, դեպքերը և պայմանները» կանոնակարգ 4/23-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
10 փետրվարի 2022 թ., N 20-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 8-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 20-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/23
ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ՀԱՐԹԱԿԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ՀԱՏՈՒԿ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎԸ, ԴՐԱՆՈՒՄ ՆԵՐԴՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴԵՊՔԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի կողմից բացվող հաշիվը՝ որպես հատուկ բանկային հաշիվ, ինչպես նաև կարգավորում է դրանում ներդրված միջոցների օգտագործման ուղղությունները, դեպքերը և պայմանները:

2. Սույն կանոնակարգում օգտագործված «քրաուդֆանդինգի հարթակի օպերատոր» և «քրաուդֆանդինգի ծառայություն» հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07-ում և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մայիսի 25-ի թիվ 80-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի լրացուցիչ գործունեության տեսակները» կանոնակարգ 5/11-ում կիրառվող նշանակությունները:

ԳԼՈՒԽ 2. ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ՀԱՐԹԱԿԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎԸ

3. Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի բանկային հաշիվը Քաղաքացիական օրենսգրքի 928.1-րդ հոդվածով սահմանված հատուկ բանկային հաշիվ է, որը կարող է օգտագործվել միայն քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի կողմից քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման հետ կապված գործառնությունների իրականացման համար:

4. Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի հաշվում առկա միջոցները չեն համարվում քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի սեփականությունը, դրանք չեն կարող գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի պարտավորությունների դիմաց կամ քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի սնանկության դեպքում հանդիսանալ պարտավորությունների կատարման համար լուծարային միջոց: Ընդ որում, քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի հաշվում առկա միջոցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.1 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հիմքով կարող են գրավադրվել, արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել միայն քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի հաշվում առկա տվյալ ծառայությունից օգտվողին պատկանող միջոցների չափով:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ներդնելու քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման կարգավորման առանձնահատուկ կանոններ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը, 36-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, 43-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, 45-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, 221-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի ««Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ը հաստատելու մասին» թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» Կանոնակարգ 4/01-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգի 25-րդ կետի 3-րդ ենթակետը «նախագծերը:» բառից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 4/07) սահմանված քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման դեպքում բանկի ներդրումային ծառայությունների մատուցման կանոնների նախագծերը ներառում են այս ծառայությունների մատուցման

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 8-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

մանրամասն կարգն ու պայմանները, այդ թվում՝ թողարկողների ընտրության չափանիշներին համապատասխանության գնահատման ընթացակարգը, գործունեության անընդհատության ծրագիրը, շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը, հարթակի օպերատորի գործառույթների պատվիրակման կանոնները, տվյալների մշակման և պահպանման համակարգերի նկարագրությունը, գործառնական ռիսկերի նկարագրությունը, այդ ռիսկերի ընդունելի մակարդակը ու դրանց հսկման և ընդունելի մակարդակում պահելու մեխանիզմները, հաճախորդներից ստացված բողոքների լուծման ընթացակարգերը:»:

2) Կանոնակարգի 26-րդ կետի 1-ին ենթակետը «ժ» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժա» պարբերությամբ.

«ժա. Կանոնակարգ 4/07-ով սահմանված քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման դեպքում ներդրումային ընկերության գործունեության կանոնների նախագծերը ներառում են այդ ծառայությունների մատուցման մանրամասն կարգն ու պայմանները, այդ թվում՝ թողարկողների ընտրության չափանիշներին համապատասխանության գնահատման ընթացակարգը, գործունեության անընդհատության ծրագիրը, շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը, հարթակի օպերատորի գործառույթների պատվիրակման կանոնները, տվյալների մշակման և պահպանման համակարգերի նկարագրությունը, գործառնական ռիսկերի նկարագրությունը, այդ ռիսկերի ընդունելի մակարդակը ու դրանց հսկման և ընդունելի մակարդակում պահելու մեխանիզմները, հաճախորդներից ստացված բողոքների լուծման ընթացակարգերը:»:

3) Կանոնակարգի 35-րդ կետի 1-ին ենթակետը «է» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը» պարբերությամբ.

«ը. Կանոնակարգ 4/07-ով սահմանված քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման դեպքում ներդրումային ընկերության մասնաճյուղի գործունեության կանոնների նախագծերը ներառում են այդ ծառայությունների մատուցման մանրամասն կարգն ու պայմանները, այդ թվում՝ թողարկողների ընտրության չափանիշներին համապատասխանության գնահատման ընթացակարգը, գործունեության անընդհատության ծրագիրը, շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը, հարթակի օպերատորի գործառույթների պատվիրակման կանոնները, տվյալների մշակման և պահպանման համակարգերի նկարագրությունը, գործառնական ռիսկերի նկարագրությունը, այդ ռիսկերի ընդունելի մակարդակը ու դրանց հսկման և ընդունելի մակարդակում պահելու մեխանիզմները, հաճախորդներից ստացված բողոքների լուծման ընթացակարգերը:»:

4) Կանոնակարգի 45-րդ կետի 6-րդ, 48-րդ կետի 7-րդ և 49-րդ կետի 7-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

5) Կանոնակարգի 126-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի՝ Կենտրոնական բանկ ներկայացված գործունեության կանոնների հետագա փոփոխությունները և այդ փոփոխությունները ներառող փոփոխված ներքին կանոնակարգերը (ներդրումային ընկերության գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը, ծրագրերը և նմանատիպ այլ փաստաթղթերը), բացառությամբ սույն կանոնակարգի 126.1-րդ կետով սահմանված դեպքի,»:

6) Կանոնակարգը 126-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 126.1-րդ կետով.

«126.1. Ներդրումային ընկերությունը, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղը լիցենզավորվելուց, իսկ օտարերկրյա ներդրումային ընկերության ներկայացուցչությունը գրանցվելուց

հետո քրաուդֆանդինգի ծառայությունների կամ լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման մասին այդ ծառայությունների մատուցումը սկսելուց առնվազն 15 աշխատանքային օր առաջ տեղեկացնում է Կենտրոնական բանկին՝ ներկայացնելով.

1) ներդրումային ընկերության, օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղի կամ ներկայացուցչության լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ծառայությունների մատուցման մանրամասն ընթացակարգը կարգավորող նոր ընդունված ներքին կանոնակարգերը (գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը, ծրագրերը և նմանատիպ այլ փաստաթղթերը),
2) Կանոնակարգ 4/07-ով սահմանված քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման դեպքում քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման նոր ընդունված ներքին կանոնակարգերը (գործունեությունը կարգավորող կանոնակարգերը, կարգերը, ընթացակարգերը, ծրագրերը և նմանատիպ այլ փաստաթղթերը), այդ թվում՝ թողարկողների ընտրության չափանիշներին համապատասխանության գնահատման ընթացակարգը, գործունեության անընդհատության ծրագիրը, շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը, հարթակի օպերատորի գործառույթների պատվիրակման կանոնները, տվյալների մշակման և պահպանման համակարգերի նկարագրությունը, գործառնական ռիսկերի նկարագրությունը, այդ ռիսկերի ընդունելի մակարդակը ու դրանց հսկման և ընդունելի մակարդակում պահելու մեխանիզմները, հաճախորդներից ստացված բողոքների լուծման ընթացակարգերը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
10 փետրվարի 2022 թ., N 21-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի թիվ 44-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով սահմանելու քրաուդֆանդինգի հարթակի օպերատորների նկատմամբ իրենց գործունեության բնույթին համահունչ նորմատիվային պահանջներ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 73-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 12-ի ««Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ը հաստատելու մասին թիվ 44-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող տարրերի կազմը, սահմանված տնտեսական նորմատիվների խախտումների չափը» կանոնակարգ 4/02-ի 10-րդ կետը «միայն» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված քրաուդֆանդինգի ծառայություն,» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
10 փետրվարի 2022 թ., N 22-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 8-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ստեղծելու նախապայմաններ քրաուդֆանդինգի հարթակի միջոցով թողարկումների համար, միաժամանակ հնարավորություն ընձեռել ներդրողներին իրազեկ ներդրումային որոշումներ կայացնելու համար ստանալու ճշգրիտ և ամբողջական տեղեկատվություն,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 18-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի ««Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին» թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումները.

1) Կանոնակարգի 7-րդ կետը 21-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 22-րդ, 23-րդ և 24-րդ ենթակետերով.

«22) «Քրաուդֆանդինգի առաջարկ». համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 4/07) կիրառվող նշանակության,

23) «Քրաուդֆանդինգի հարթակ». համաձայն Կանոնակարգ 4/07-ում կիրառվող նշանակության,

24) «Քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթ». համաձայն Կանոնակարգ 4/07-ում կիրառվող նշանակության:»:

2) Կանոնակարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետում «40 միլիոն դրամը,» բառերը փոխարինել «200 միլիոն դրամը, բացառությամբ քրաուդֆանդինգի առաջարկների, որոնց դեպքում առաջարկվող արժեթղթերի ընդհանուր արժեքը (թողարկված քրաուդֆանդինգի առաջարկի ամփոփ փաստաթղթի հիման վրա կամ սույն կետով սահմանված ազդագրի հրապարակման պահանջից բացառությամբ) թողարկման կամ վաճառքի գնով 12 ամսվա ընթացքում չի գերազանցում 2,5 միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամը (բոլոր քրաուդֆանդինգի հարթակներով),» բառերով:

3) Կանոնակարգի 68-րդ կետի.

ա. 7-րդ ենթակետը «և ձեռքբերման վայրերը» բառերից հետո լրացնել «, իսկ քրաուդֆանդինգի առաջարկի դեպքում՝ հղում քրաուդֆանդինգի հարթակի՝ քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը պարունակող ինտերնետային էջին»,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 8-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

բ. 8-րդ ենթակետը «մասին» բառից հետո լրացնել «, իսկ քրաուդֆանդինգի առաջարկի դեպքում՝ դրույթ այն մասին, որ քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը գրանցված չէ Կենտրոնական բանկի կողմից»:

4) Կանոնակարգը 68-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 68.1-րդ և 68.2-րդ ենթակետերով.

«68.1) Քրաուդֆանդինգի առաջարկի դեպքում գովազդային նյութը պետք է պարունակի միայն այնպիսի տեղեկատվություն, որը ներառված է քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթում:

68.2) Գովազդային նյութը չպետք է այնպիսի տպավորություն ստեղծի, որ ներդրողները կարող են օգուտ ակնկալել առանց համապատասխան ռիսկեր ստանձնելու:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
10 փետրվարի 2022 թ., N 23-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով սահմանելու քրաուդֆանդինգի հարթակի օպերատորների նկատմամբ իրենց գործունեության բնույթին համահունչ պահանջներ և միաժամանակ խրախուսելու այս հարթակում թողարկողների և ներդրողների մուտքը՝ ամրագրելով քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման համար հստակ, արդյունավետ և ներդրողների շահերը պաշտպանող պահանջներ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) Կանոնակարգի 1-ին գլուխը «պահանջները:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն կանոնակարգը տարածվում է միայն արժեթղթերի հրապարակային առաջարկի միջոցով իրականացվող քրաուդֆանդինգի (ներդրումային քրաուդֆանդինգ) հետ կապված քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման վրա:»:

2) Կանոնակարգի 1-ին կետը 19-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-33-րդ ենթակետերով.

«

20) «Քրաուդֆանդինգի ծառայություն». քրաուդֆանդինգի հարթակի միջոցով նախագծերի ֆինանսավորման նպատակով արժեթղթերում ներդրողների և դրանց թողարկողների հանդիպման միջոցի տրամադրում, որը բաղկացած է Օրենքի 25-րդ հոդվածով սահմանված հետևյալ ծառայություններից միաժամանակ.

ա. հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում և

բ. արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացում:

21) «Քրաուդֆանդինգի հարթակի օպերատոր» կամ «հարթակի օպերատոր». ներդրումային ծառայություններ մատուցող անձ, որը մատուցում է քրաուդֆանդինգի ծառայություն:

22) «Քրաուդֆանդինգի հարթակ». ներդրումային ծառայություններ մատուցող անձի ինտերնետային կայքի միջոցով հանրությանը հասանելի հարթակ, որը կառավարվում է կամ որի գործունեությունը կազմակերպվում է հարթակի օպերատորի կողմից:

---

* *Ոչ պաշտոնական հրապարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 8-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

23) «Քրաուդֆանդինգի առաջարկ». քրաուդֆանդինգի հարթակի միջոցով իրականացվող արժեթղթերի հրապարակային առաջարկ, որը ներառում է քրաուդֆանդինգի հարթակում հրապարակված նախագծերի վերաբերյալ ներդրումային որոշում կայացնելու համար սույն կանոնակարգով նախատեսված և այլ անհրաժեշտ տեղեկությունները:

24) «Հաճախորդ». համաձայն Օրենքում կիրառվող նշանակության: Ընդ որում՝ քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման դեպքում հաճախորդ են համարվում ներդրողները և թողարկողները, որոնք օգտվում են հարթակի օպերատորի կողմից մատուցվող քրաուդֆանդինգի ծառայությունից, կամ որոնք դիմել են հարթակի օպերատորին քրաուդֆանդինգի ծառայությունից օգտվելու նպատակով:

25) «Թողարկող». համաձայն Օրենքում կիրառվող նշանակության: Ընդ որում՝ քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման դեպքում թողարկող է համարվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձը, որը քրաուդֆանդինգի առաջարկի միջոցով արժեթղթերի թողարկմամբ ֆինանսավորում է կամ նախատեսում է ֆինանսավորել իր նախագիծը:

26) «Նախագիծ». ծրագիր կամ բիզնես գործունեություն, որը թողարկողը ֆինանսավորում է կամ նախատեսում է ֆինանսավորել քրաուդֆանդինգի առաջարկի միջոցով:

27) «Քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթ». թողարկողի, իր կողմից առաջարկվող նախագծի և արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որի հիման վրա իրականացվում է քրաուդֆանդինգի առաջարկը:

28) «Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի բանկային հաշիվ». Կենտրոնական բանկի խորհրդի 2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 20-Ն որոշմամբ հաստատված «Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի հատուկ բանկային հաշիվը, դրանում ներդրված միջոցների օգտագործման ուղղությունները, դեպքերը և պայմանները» կանոնակարգ 4/23-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 4/23) սահմանված քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի հատուկ բանկային հաշիվ:

29) «Հաշվարկային բանկ». առևտրային բանկ, որը Կանոնակարգ 4/23-ի համաձայն վարում է քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի բանկային հաշիվը:

30) «Կանոնակարգ 4/04». Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04:

31) «Խոշոր բաժնետեր». համաձայն Կանոնակարգ 4/04-ում կիրառվող նշանակության:

32) «Կառավարման մարմին». համաձայն Կանոնակարգ 4/04-ում կիրառվող նշանակության:

33) «Երաշխավորություն». համաձայն Կանոնակարգ 4/04-ում կիրառվող նշանակության:»:

3) Կանոնակարգի 38-րդ կետը 8.1-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.2-8.5-րդ ենթակետերով.

«8.2) Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի և թողարկողի միջև կնքվող պայմանագիրը ներառում է նաև.

ա. թողարկողի կողմից հավաստիացում առ այն, որ հարթակի օպերատորին տրամադրվող տեղեկատվությունը ճշգրիտ է, ամբողջական, առանց էական տեղեկությունների կամ փաստերի բացթողման կամ խեղաթյուրման,

բ. դրույթ առ այն, որ տվյալ նախագծին առնչվող քրաուդֆանդինգի բոլոր առաջարկները պետք է հրապարակվեն միայն տվյալ քրաուդֆանդինգի հարթակում,

գ. դրույթ առ այն, որ նախքան քրաուդֆանդինգի առաջարկի հրապարակումը, թողարկողը պարտավոր է թողարկվող արժեթղթերի ռեեստրի վարումը հանձնել մասնագիտացված ռեեստրավարին,

դ. դրույթ առ այն, որ թողարկողը պարտավորվում է ներկայացնել սույն կանոնակարգի 104-րդ և 105-րդ կետերով սահմանված լրացումներն ու փոփոխությունները,

ե. ներդրողներից ներգրավված գումարների՝ քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի բանկային հաշվից թողարկողի բանկային հաշվին փոխանցման կարգն ու պայմանները:

8.3) Սույն կետի 8.2-րդ ենթակետով սահմանված պայմանագիրը կնքված է համարվում թողարկողի կողմից քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի կողմից կազմակերպվող քրաուդֆանդինգի հարթակում դրա հաստատման պահից:

8.4) Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի և ներդրողի միջև կնքվող պայմանագիրը ներառում է նաև.

ա. ներդրողի կողմից արժեթղթերում ներդրումը կատարելու և իր ներդրման դիմաց նախատեսվող եկամուտը (շահութաբաժինը) ստանալու կարգը,

բ. դրույթ առ այն, որ ներդրողը հնարավորություն ունի սույն կանոնակարգով սահմանված դեպքերում (այդ թվում՝ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողների դեպքում՝ սույն կանոնակարգի 22-րդ գլխով սահմանված մտածելու ժամանակի ընթացքում) չեղյալ համարել նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ իր կողմից ներկայացված հայտը,

գ. հարթակի օպերատորի միջոցով ձեռքբերված արժեթղթերի պահառության իրականացման կարգը:

8.5) Սույն կետի 8.4-րդ ենթակետով սահմանված պայմանագիրը կնքված է համարվում ներդրողի կողմից քրաուդֆանդինգի հարթակում դրա հաստատման պահից:»:

4) Կանոնակարգը 15-րդ գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-րդ գլխով.

«

ԳԼՈՒԽ 15.1.
ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

75.1. Ի լրումն սույն կանոնակարգի 13-րդ, 14-րդ և 15-րդ գլուխներով սահմանված գրանցումներ կատարելու պահանջների, քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման դեպքում հարթակի օպերատորն իրականացնում է սույն գլխով սահմանված գրանցումները:

75.2. Քրաուդֆանդինգի առաջարկի ավարտից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, հարթակի օպերատորը կատարում է գրանցումներ քրաուդֆանդինգի առաջարկի էական պայմանների վերաբերյալ, որոնք առնվազն ներառում են.

1) թողարկողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում անունը, ազգանունը),

2) թողարկողի գտնվելու վայրը, պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում պետական հաշվառման համարը և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն), կապի միջոցները,

3) ներգրավված նպատակային գումարի մեծությունը,

4) տեղաբաշխված արժեթղթի դասը,

5) միավոր արժեթղթի գինը,
6) արժեկտրոնի տոկոսադրույքը (առկայության դեպքում), արժեթղթի տարեկան եկամտաբերությունը կամ շահութաբաժինները (առկայության դեպքում),
7) մարման ժամկետը (առկայության դեպքում),
8) ներդրողների քանակը:

75.3. Հարթակի օպերատորն ապահովում է իր հաճախորդների հետ կնքած պայմանագրերի պահպանումը պայմանագրի կնքման պահից առնվազն 7 տարի:

75.4. Հարթակի օպերատորն ապահովում է, որպեսզի իր հաճախորդները մշտապես հասանելիություն ունենան իրենց գործարքների հետ կապված գրանցումներին:»:

5) Կանոնակարգը 17-րդ գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ գլուխներով.

«

ԳԼՈՒԽ 18. ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՕԳՏԱՏԻՐՈՋ ՀԱՇՎԻ ՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ, ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԱՌԱՋԱՐԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄԸ

85. Հարթակի օպերատորը իր կողմից կազմակերպվող քրաուդֆանդինգի հարթակում թողարկողներին օգտատիրոջ կարգավիճակ է տրամադրում (գրանցում է թողարկողի օգտատիրոջ հաշիվը (անձնական էջը)) առնվազն հետևյալ պայմանների միաժամանակյա բավարարման դեպքում.

1) հարթակում առցանց գրանցում,
2) սույն կանոնակարգի 9-րդ գլխով սահմանված պահանջները բավարարող պայմանագրի կնքում:

86. Թողարկողի կարգավիճակ տրամադրելու կամ քրաուդֆանդինգի հարթակում թողարկողի քրաուդֆանդինգի առաջարկը հրապարակելու վերաբերյալ որոշում կայացնելու համար հարթակի օպերատորը թողարկողից պահանջում է հետևյալ փաստաթղթերը.

1) թողարկողի կարգավիճակ ստանալու կամ քրաուդֆանդինգի առաջարկ իրականացնելու հայտը,
2) սույն կանոնակարգի 19-րդ գլխով և հարթակի օպերատորի կանոններով սահմանված թողարկողի ընտրության չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը,
3) սույն կանոնակարգի 20-րդ գլխով սահմանված քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը,
4) թողարկողի գործարար ծրագիրը,
5) բանկային հաշվի տվյալները, որին փոխանցվելու են սույն կանոնակարգի համաձայն քրաուդֆանդինգի առաջարկի արդյունքում ներդրողներից ներգրավված միջոցները,
6) վերջին հաշվետու ֆինանսական տարվա տարեկան հաշվետվությունները (առկայության դեպքում), իսկ 1 տարուց պակաս գործունեություն ծավալած ընկերության դեպքում հաշվետվությունները ներկայացվում են գործունեության ողջ ժամանակահատվածի համար, անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում՝ ֆինանսական վիճակը բնութագրող էական ցուցանիշների հակիրճ նկարագրությունը,
7) քրաուդֆանդինգի հարթակում հրապարակվող նախագծի՝ Օրենքի և սույն կանոնակարգի պահանջները բավարարող գովազդը (առկայության դեպքում),
8) հարթակի օպերատորի պահանջով անհրաժեշտ այլ տեղեկություններ:

87. Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորը սույն կանոնակարգի 86-րդ կետով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո՝ իր կանոններով սահմանված ժամկետում, որոշում է կայացնում թողարկողի կարգավիճակ տրամադրելուն (բացառությամբ, եթե թողարկողն արդեն ունի թողարկողի կարգավիճակ) և իր կողմից կազմակերպվող քրաուդֆանդինգի հարթակում տվյալ թողարկողի քրաուդֆանդինգի առաջարկի հրապարակմանը համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

88. Հարթակի օպերատորը մերժում է թողարկողի կարգավիճակ ստանալու կամ քրաուդֆանդինգի առաջարկի հրապարակման հայտը, եթե առկա է հետևյալ հիմքերից որևէ մեկը.

1) նախագծի և դրա վերաբերյալ քրաուդֆանդինգի առաջարկի պայմանները չեն բավարարում Օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով կամ հարթակի օպերատորի կանոններով սահմանված պահանջները,
2) թողարկողը չի բավարարում սույն կանոնակարգի 19-րդ գլխով կամ հարթակի օպերատորի կանոններով սահմանված թողարկողների ընտրության չափանիշները,
3) եթե առկա են հիմնավոր կասկածներ, որ կարող են խախտվել Օրենքի և դրա հիման վրա ընդունված իրավական ակտերի պահանջները,
4) հարթակի օպերատորի կանոններով կամ հարթակի օպերատորի և թողարկողի միջև կնքված պայմանագրով նախատեսված այլ մերժման հիմքերի առկայության դեպքում:

89. Հարթակի օպերատորը սույն կանոնակարգի 87-րդ կետով սահմանված որոշումը կայացնելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում այն տրամադրում է թողարկողին:

90. Հարթակի օպերատորը տեղեկացնում է Կենտրոնական բանկին իր կողմից կազմակերպվող քրաուդֆանդինգի հարթակում հրապարակվող քրաուդֆանդինգի առաջարկի մասին քրաուդֆանդինգի հարթակում դրա հրապարակումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ՝ ներկայացնելով սույն կանոնակարգի 86-րդ կետով սահմանված փաստաթղթերը: Նշված փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ էլեկտրոնային փոստով (առկայության դեպքում՝ ՍիԲիէյՆեթ համակարգի միջոցով), ՓիԴիԷՖ ֆորմատով: Փաստաթղթերը պետք է լինեն պաշտպանված, որպեսզի հնարավոր չլինի դրանցում ներառված տեղեկատվությունում կատարել որևէ փոփոխություն: Եթե փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ կամ լրացումներ, ապա այդ լրացված կամ փոփոխված մասերը ներկայացվում են Կենտրոնական բանկ սույն կետում սահմանված կարգով:

91. Թողարկողի քրաուդֆանդինգի առաջարկի հրապարակմանը համաձայնություն տալուց հետո հարթակի օպերատորն իրավասու է կասեցնելու կամ հետ կանչելու թողարկողի կարգավիճակ տրամադրելուն կամ իր կողմից կազմակերպվող քրաուդֆանդինգի հարթակում տվյալ թողարկողի քրաուդֆանդինգի առաջարկի հրապարակմանը համաձայնություն տալու վերաբերյալ որոշումը սույն կանոնակարգի 88-րդ կետով սահմանված դեպքերից որևէ մեկի ի հայտ գալու դեպքում: Այս դեպքում հարթակի օպերատորը կասեցման կամ հետկանչման որոշման, ինչպես նաև ներդրում կատարելու վերաբերյալ ներկայացրած հայտը չեղարկելու հնարավորության մասին անհապաղ տեղեկացնում է այն ներդրողներին, որոնք սույն կանոնակարգի 22-րդ գլխի համաձայն քրաուդֆանդինգի հարթակի միջոցով ներկայացրել են հայտ տվյալ նախագծում ներդրումներ կատարելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 19. ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

92. Հարթակի օպերատորը սույն կանոնակարգի 87-րդ կետով սահմանված որոշումը կայացնելու համար պետք է առնվազն թողարկողի համբավի վերլուծություն իրականացնի:

93. Թողարկողի համբավի վերլուծության համար հարթակի օպերատորի կողմից առնվազն.

1) պահանջվում է տեղեկանք այն մասին, որ թողարկողը կամ նրա կառավարման մարմինները չունեն դատվածություն կամ որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված չեն տնտեսական հանցագործությունների կամ խարդախության համար,
2) ստուգվում է, թե արդյոք թողարկողը կամ նրա կառավարման մարմինները ներառված չեն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում:

94. Հարթակի օպերատորը սահմանում է սույն գլխով նախատեսված թողարկողների ընտրության չափանիշներին համապատասխանության գնահատման գործընթացը կարգավորող կանոններ:

ԳԼՈՒԽ 20. ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

95. Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորը քրաուդֆանդինգի հարթակում՝ յուրաքանչյուր թողարկողի առանձին էջում, յուրաքանչյուր քրաուդֆանդինգի առաջարկի իրականացման համար հրապարակում է սույն գլխով սահմանված պահանջները բավարարող քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթ:

96. Քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը կազմված է.

1) դիմային էջից,
2) «Բովանդակություն» մասից,
3) «Պատասխանատու անձինք» մասից,
4) սույն կանոնակարգի հավելված 2-ում սահմանված «Քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթում ներառվող տեղեկություններ» մասից:

97. Քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթի դիմային էջն առնվազն ներառում է.

1) թողարկողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում անունը, ազգանունը),
2) արժեթղթի տեսակը (դասը) և «ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ» բառերը,
3) հեշտ ընթեռնելի (աչքի ընկնող, առավել մեծ) տառաչափով, տառատեսակով և տեսանելի ձևով նշում հետևյալ բովանդակությամբ. «Քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը գրանցված չէ Կենտրոնական բանկի կողմից»,
4) փաստաթղթի աչքի ընկնող հատվածում հեշտ ընթեռնելի (աչքի ընկնող, առավել մեծ) տառաչափով և տառատեսակով նշում հետևյալ բովանդակությամբ. «Այս արժեթղթերում ներդրումը կարող է պարունակել զգալի ռիսկեր և կարող է հանգեցնել ներդրված գումարի ամբողջությամբ կամ մասնակի կորստի: Ձեռք բերված արժեթղթերի վաճառքը ցանկացած պահի կարող է հնարավոր չլինել կամ հնարավոր լինել մեծ կորուստներով:»:

98. «Բովանդակություն» մասը պետք է պարզ և մատչելի ձևով արտացոլի քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթի բովանդակությունը:

99. «Պատասխանատու անձինք» մասում ներկայացվում են բոլոր այն անձանց վերաբերյալ տեղեկությունները, որոնք պատասխանատու են քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթում ներառվող տեղեկությունների (կամ դրա որոշակի մասերի) ճշգրտության և ամբողջականության համար: Սույն բաժնում առնվազն ներկայացվում է.

1) պատասխանատու անձանց անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, պաշտոնը) և կապի միջոցը,
2) դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթում ներառված տեղեկությունների ճշգրիտ և ամբողջական լինելը: Ըստ այդմ, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ամբողջական են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել քրաուդֆանդինգի վերաբերյալ ամփոփ փաստաթղթի, ուստի և՝ քրաուդֆանդինգի առաջարկի բովանդակությունը:»:

100. Քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը կազմվում և հրապարակվում է առնվազն հայերեն լեզվով: Սույն կետով սահմանված պահանջը չի սահմանափակում քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթի կազմումը և հրապարակումը հայերենի հետ մեկտեղ այլ լեզուներով: Եթե հայերենի հետ մեկտեղ այլ լեզուներով հրապարակված փաստաթղթերի միջև առկա է իմաստային անհամապատասխանություն, կամ դրանք կարող են մեկնաբանվել տարբեր իմաստներով, ապա գերակայում է հայերեն լեզվով հրապարակված փաստաթուղթը:

101. Քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը պետք է պարունակի հստակ, ճշգրիտ և համապարփակ տեղեկատվություն, որը հնարավորություն կտա ներդրողին կայացնելու իրազեկ ներդրումային որոշում: Դա պետք է կազմված լինի առավելագույնը 10 էջից (A4 ձևաչափ, 12 տառաչափ):

102. Յուրաքանչյուր առանձին քրաուդֆանդինգի առաջարկի դեպքում կազմվում և հրապարակվում է առանձին քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթ:

103. Հարթակի օպերատորը պետք է ունենա և կիրառի ողջամիտ ընթացակարգեր քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթում ներառված տեղեկությունների ամբողջականությունն ու հստակությունը ապահովելու, ինչպես նաև տվյալ փաստաթղթում ոչ ճշգրիտ տեղեկությունների հրապարակումը բացառելու համար:

104. Հարթակի օպերատորը պետք է պահանջի թողարկողից իրեն տեղեկացնել քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթում ներառված տեղեկությունների փոփոխությունների կամ նոր էական փաստերի ի հայտ գալու մասին քրաուդֆանդինգի առաջարկի ողջ ընթացքում՝ թողարկողի տեղեկանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Հարթակի օպերատորը պարտավոր է սույն կետով սահմանված փոփոխված տեղեկությունների և նոր էական փաստերի, ներդրում կատարելու վերաբերյալ ներկայացրած հայտը չեղյալ համարելու հնարավորության մասին անհապաղ տեղեկացնել այն ներդրողներին, որոնք սույն կանոնակարգի 22-րդ գլխի համաձայն քրաուդֆանդինգի հարթակի միջոցով ներկայացրել են հայտ տվյալ նախագծում ներդրումներ կատարելու վերաբերյալ: Փաստաթղթում յուրաքանչյուր լրացման կամ փոփոխության կատարման դեպքում նշվում է այդ լրացման կամ փոփոխության կատարման ժամկետը՝ պահպանելով հին տեղեկությունները:

105. Եթե հարթակի օպերատորը քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթում բացահայտում է բացթողում, սխալ կամ անճշտություն կամ նոր փաստ, որը կարող է էական ազդեցություն ունենալ ներդրումից ակնկալվող եկամտի վրա, ապա հարթակի օպերատորը անհապաղ տեղեկացնում է տվյալ բացթողման, սխալի կամ անճշտության մասին թողարկողին, որը պետք է անհապաղ իրականացնի փաստաթղթի համապատասխան լրացումը կամ փոփոխությունը: Եթե փաստաթղթի լրացումը կամ փոփոխությունը չի իրականացվում անհապաղ, ապա հարթակի օպերատորը կասեցնում է քրաուդֆանդինգի առաջարկը մինչև փաստաթղթի համապատասխան լրացումը կամ փոփոխությունը, սակայն ոչ ավելի, քան 30 օրով: Հարթակի օպերատորը անհապաղ տեղեկացնում է սույն կետով սահմանված թերությունների, նախաձեռնված և նախաձեռնվելիք միջոցառումների, ներդրում կատարելու վերաբերյալ ներկայացրած հայտը չեղյալ համարելու հնարավորության մասին այն ներդրողներին, որոնք սույն կանոնակարգի 22-րդ գլխի համաձայն քրաուդֆանդինգի հարթակի միջոցով ներկայացրել են հայտ տվյալ նախագծում ներդրումներ կատարելու վերաբերյալ:

106. Քրաուդֆանդինգի առաջարկը չեղյալ է համարվում, եթե թողարկողը չի թարմացնում քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը սույն կանոնակարգի 105-րդ կետով սահմանված ժամկետում, որի մասին հարթակի օպերատորը տեղեկացնում է ներդրողներին և թողարկողին:

107. Սույն գլխով սահմանված բոլոր ծանուցումները թողարկողներին և ներդրողներին իրականացվում են էլեկտրոնային տարբերակով:

108. Քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը Կենտրոնական բանկի նախնական համաձայնությանը չի ներկայացվում:

ԳԼՈՒԽ 21. ՀԱՐԹԱԿԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

109. Հարթակի օպերատորը իր կողմից կազմակերպվող քրաուդֆանդինգի հարթակում ներդրողներին օգտատիրոջ կարգավիճակ է տրամադրում (գրանցում է ներդրողի օգտատիրոջ հաշիվը (անձնական էջը)) առնվազն հետևյալ պայմանների միաժամանակ բավարարման դեպքում.

1) հարթակում առցանց գրանցում,
2) սույն կանոնակարգի 9-րդ գլխով սահմանված պահանջները բավարարող պայմանագրի կնքում:

110. Օգտատիրոջ հաշվի գրանցումից հետո հարթակի օպերատորը ներդրողներին ներդրողի կարգավիճակ է տրամադրում առնվազն ռիսկերի վերաբերյալ իրազեկող տեղեկատվությանը ծանոթացման մասին ներդրողի կողմից հավաստիացման դեպքում:

111. Քրաուդֆանդինգի հարթակում ներդրողի առցանց գրանցման համար հարթակի օպերատորը ներդրողից պահանջում է առնվազն նրա անվանումը (անուն, ազգանունը), էլեկտրոնային հասցեն, գրանցման վայրը:

112. Ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող յուրաքանչյուր ռեզիդենտ ֆիզիկական անձ ներդրողի կողմից մեկ նախագծում ներդրվող գումարը 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցելու դեպքում հարթակի օպերատորը տվյալ ներդրողին հնարավոր ռիսկերի մասին լրացուցիչ նախազգուշացում է ներկայացնում: Տվյալ նախազգուշացումը պետք է ներառի դրույթ այն մասին, որ հաճախորդը կարող է կորցնել ներդրած ամբողջ գումարը: Հաճախորդը պետք է հաստատի, որ ստացել է տվյալ նախազգուշացումը հարթակի օպերատորի կողմից և գիտակցում է իրեն սպառնացող ռիսկերը:

ԳԼՈՒԽ 22. ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

113. Քրաուդֆանդինգի առաջարկը սկսվում է հարթակի օպերատորի կողմից քրաուդֆանդինգի առաջարկը հրապարակելու և միաժամանակ նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ ներդրողների կողմից հայտ ներկայացնելու հնարավորություն ընձեռելու պահից:

114. Քրաուդֆանդինգի առաջարկն ավարտվում է հետևյալ դեպքերում.

1) քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթում նշված վերջնաժամկետը լրանալու դեպքում, կամ
2) նախքան սույն կետի 1-ին ենթակետով նշված վերջնաժամկետի լրանալը նպատակային գումարը (միաժամանակ նվազագույն և առավելագույն նպատակային գումար նախատեսված լինելու դեպքում՝ առավելագույն նպատակային գումարը) հավաքագրելու դեպքում (այդ թվում՝ ներդրողների կողմից ներկայացված և սույն կանոնակարգի 116-րդ կետով սահմանված մտածելու ժամանակի ընթացքում չեղյալ չհամարված հայտերի հիման վրա), կամ
3) սույն կանոնակարգով սահմանված դեպքերում քրաուդֆանդինգի առաջարկը չեղյալ համարվելու դեպքում:

115. Հարթակի օպերատորը պետք է ապահովի նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ ներդրողների կողմից ներկայացված հայտերի՝ ժամանակագրական կարգով հաշվառումն ու պահպանումը:

116. Հարթակի օպերատորը ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողներին տրամադրում է մտածելու ժամանակ, որի ընթացքում տվյալ ներդրողները կարող են չեղյալ համարել նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ իրենց կողմից ներկայացրած հայտը՝ առանց որևէ իրավական հետևանքների և չեղյալ համարելու պատճառների բացահայտման պարտավորության (այսուհետ՝ մտածելու ժամանակ):

117. Սույն կանոնակարգի 116-րդ կետով նախատեսված մտածելու ժամանակը սկսվում է ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողի կողմից նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ հայտը ներկայացնելու պահից և տևում է առնվազն չորս օր:

118. Մտածելու ժամանակ կարող է չտրամադրվել այն ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողներին, որոնք նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ հայտ են ներկայացրել սույն կանոնակարգի 114-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վերջնաժամկետին նախորդող չորս օրվա ընթացքում: Եթե սույն կանոնակարգի 114-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված վերջնաժամկետին նախորդող չորս օրվա ընթացքում չի տրամադրվում մտածելու ժամանակ, ապա բոլոր ներդրողների մտածելու ժամանակն ավարտվում է վերջնաժամկետին նախորդող չորրորդ օրը՝ անկախ նրանից, թե երբ է սկսվել մտածելու ժամանակը:

119. Մտածելու ժամանակի ընթացքում ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողների կողմից քրաուդֆանդինգի հարթակի միջոցով պրոյեկտում ներդրումներ կատարելու վերաբերյալ հայտ ներկայացնելու և չեղյալ համարելու մեթոդները պետք է լինեն նույնը:

120. Հարթակի օպերատորը պարտավոր է.

1) ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողներին տեղեկացնել մտածելու ժամանակի առկայության (բացակայության), դրա տևողության, ինչպես նաև ներկայացրած հայտը չեղյալ համարելու մեթոդների մասին նախագծում ներդրումներ կատարելու վերաբերյալ հայտը ներդրողների կողմից ներկայացնելուց անմիջապես առաջ,

2) ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողներին տեղեկացնել մտածելու ժամանակը սկսելու մասին նախագծում ներդրումներ կատարելու վերաբերյալ հայտը ներդրողների կողմից ներկայացնելուց անմիջապես հետո:

121. Քրաուդֆանդինգի առաջարկի ամբողջ ընթացքում հարթակի օպերատորն ապահովում է ներդրողների կողմից նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ հայտ ներկայացնելու հնարավորությունը, իսկ քրաուդֆանդինգի առաջարկի կասեցման, ավարտի կամ սույն կանոնակարգի 122-րդ կետով սահմանված դեպքում ներդրողների կողմից նախագծում ներդրումներ կատարելու վերաբերյալ հայտ ներկայացնելու հնարավորության կասեցումը (դադարեցումը):

122. Այն պահին, երբ ներդրողների կողմից ներկայացված հայտերի հիման վրա (այդ թվում՝ այն ներդրողների հայտերի հիման վրա, որոնց մտածելու ժամանակը դեռ չի ավարտվել) նախագծի ֆինանսավորման համար անհրաժեշտ նպատակային գումարը (միաժամանակ նվազագույն և առավելագույն նպատակային գումար նախատեսված լինելու դեպքում՝ առավելագույն նպատակային գումարը) հավաքագրվում է, հարթակի օպերատորը կասեցնում է ներդրողների կողմից նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ հայտերի ընդունումը: Եթե մտածելու ժամանակի ընթացքում նախագծում ներդրման վերաբերյալ ներկայացված հայտը չեղյալ է համարվում որևէ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողի կողմից, որի արդյունքում սույն կանոնակարգի 114-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն քրաուդֆանդինգի առաջարկն այլևս չի ապահովում նախագծի ֆինանսավորման համար անհրաժեշտ նպատակային գումարը (միաժամանակ նվազագույն և առավելագույն նպատակային գումար նախատեսված լինելու դեպքում՝ առավելագույն նպատակային գումարը), հարթակի օպերատորը շարունակում է ներդրողների կողմից նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ նոր հայտերի ընդունումը մինչև սույն կանոնակարգի 114-րդ կետով սահմանված քրաուդֆանդինգի առաջարկի ավարտը:

123. Քրաուդֆանդինգի առաջարկի արդյունքների մասին հարթակի օպերատորը քրաուդֆանդինգի առաջարկի ավարտից հետո անմիջապես ծանուցում է ուղարկում քրաուդֆանդինգի հարթակի միջոցով նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ հայտ ներկայացրած ներդրողներին և թողարկողին, այդ թվում՝ սույն կանոնակարգի 10-րդ գլխով սահմանված հաշվետվությունը (քրաուդֆանդինգի առաջարկի կայացման դեպքում):

124. Հարթակի օպերատորն ապահովում է, որ ներդրումային հայտ ներկայացրած ներդրողներից դրամական միջոցներ չհավաքագրվեն, եթե տվյալ ներդրողի մտածելու ժամանակը չի ավարտվել:

ԳԼՈՒԽ 23. ՀԱՐԹԱԿԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ՀԱՐԹԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

125. Հարթակի օպերատոր կարող են լինել միայն այն ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, որոնք իրավունք ունեն մատուցել հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման ու արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացման ներդրումային ծառայություններ:

126. Հարթակի օպերատորը պարտավոր է ունենալ քրաուդֆանդինգի ծառայությունները կարգավորող գործունեության կանոններ, որոնք կներառեն նաև սույն կանոնակարգով պահանջվող ընթացակարգերը և կանոնները:

127. Հարթակի օպերատորի կողմից կազմակերպվող քրաուդֆանդինգի հարթակում շրջանառվող արժեթղթերի գծով հարթակի օպերատորը չի կարող հաճախորդներին տրամադրել արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվություն:

128. Հարթակի օպերատորը կարող է մատուցել քրաուդֆանդինգի ծառայություններ ներդրողներին և թողարկողներին միայն նրանցից յուրաքանչյուրի հետ կնքված քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:

129. Հարթակի օպերատորն ապահովում է ներդրողների կողմից ձեռք բերված արժեթղթերի պահառության արագ և պատշաճ իրականացումը:

130. Հարթակի օպերատորը քրաուդֆանդինգի ծառայության մատուցման հետ կապված իր հաճախորդներից ստացված գումարները կուտակում է հաշվարկային բանկում բացված քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի բանկային հաշվին: Ընդ որում՝ հարթակի օպերատորը պետք է ապահովի այնպիսի հաշվառում, որը թույլ կտա ցանկացած պահի առանձնացնել յուրաքանչյուր նախագծի համար քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի բանկային հաշվին կուտակված ներդրումները և դրանցում ներդրում կատարած ներդրողներին:

131. Հարթակի օպերատորը պետք է ունենա գործունեության անընդհատության ծրագիր, որը կսահմանի այն միջոցառումներն ու ընթացակարգերը, որոնք անհրաժեշտ են հարթակի օպերատորի ծառայությունների՝ սույն կանոնակարգի համաձայն և անխափան իրականացումն ապահովելու համար, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների դեպքում: Հարթակի օպերատորը պետք է պարբերաբար վերանայի գործունեության անընդհատության ծրագիրը սույն կետով սահմանված պահանջները մշտապես բավարարելու նպատակով:

132. Հարթակի օպերատորը պետք է ունենա քրաուդֆանդինգի ծառայությունների բնույթին և բարդությանը, ինչպես նաև սույն կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանող տեխնիկածրագրային համակարգ:

133. Հարթակի օպերատորը պետք է ապահովի ծրագրային համակարգի հուսալիությունը, ապահովությունը, անվտանգությունն ու գործունեության անընդհատությունը, այդ թվում՝ ապահովի գործառնական ռիսկերի բացահայտումը, գնահատումը և դրանց կառավարումը:

134. Հարթակի օպերատորն ապահովում է, որ իր կողմից կազմակերպվող քրաուդֆանդինգի հարթակում իրականացվող քրաուդֆանդինգի առաջարկներն իրականացվեն միայն քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթի հիման վրա, ինչպես նաև բավարարեն Կանոնակարգ 4/04-ի 10-րդ կետի 3-րդ ենթակետով քրաուդֆանդինգի առաջարկների համար սահմանված պայմանները և առաջարկվող արժեթղթերի ընդհանուր արժեքի առավելագույն շեմը:

135. Հարթակի օպերատորն ապահովում է, որ իր կողմից կազմակերպվող քրաուդֆանդինգի հարթակում ոչ ռեզիդենտ թողարկողների կողմից իրականացվող քրաուդֆանդինգի առաջարկներն իրականացվեն միայն Հայաստանի Հանրապետության դրամով:

136. Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորների կողմից մատուցվող ծառայությունների շրջանակում բոլոր փաստաթղթերը շրջանառվում են էլեկտրոնային տարբերակով:

ԳԼՈՒԽ 24. ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

137. Քրաուդֆանդինգի օպերատորը պետք է ունենա և կիրառի ներքին կանոններ՝ քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման հետ կապված հնարավոր շահերի բախումները կանխարգելելու համար:

138. Հարթակի օպերատորը չպետք է ունենա մասնակցություն իր կողմից կազմակերպվող հարթակում հրապարակված որևէ նախագծում:

139. Հարթակի օպերատորի կողմից կազմակերպվող հարթակում թողարկող չեն կարող լինել հարթակի օպերատորի հետ փոխկապակցված անձինք, հարթակի օպերատորի հետ փոխկապակցված անձանց հսկող անձինք, հարթակի օպերատորի կառավարման մարմինները, աշխատակիցները:

140. Եթե քրաուդֆանդինգի հարթակում հրապարակված նախագծում ներդրումներ են իրականացնում սույն կանոնակարգի 139-րդ կետով նախատեսված անձինք, ապա հարթակի օպերատորը պետք է իր ինտերնետային կայքում բացահայտի այդ տեղեկատվությունը, այդ թվում՝ նշելով նախագծերի անվանումները, որտեղ տվյալ անձինք ներդրում են կատարել: Այս դեպքում հարթակի օպերատորն ապահովում է, որ սույն կանոնակարգի 139-րդ կետով նախատեսված անձանց համար և այլ ներդրողների համար հրապարակվող տեղեկություններին հասանելիությունը և այլ ներդրումային պայմանները լինեն նույնը:

141. Հարթակի օպերատորը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցառումները հարթակի օպերատորի, իր հետ փոխկապակցված անձի կամ նրանց հսկող անձանց, իր կառավարման մարմինների, աշխատակիցների և իր հաճախորդների կամ իր տարբեր հաճախորդների միջև շահերի հնարավոր բախումները բացահայտելու, կանխարգելելու, իսկ դրա անհնարինության դեպքում նվազեցնելու և հրապարակելու համար:

142. Հարթակի օպերատորը պետք է իր հաճախորդներին բացահայտի քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման հետ կապված շահերի բախումների ընդհանուր բնույթը և աղբյուրները, ինչպես նաև դրանց նվազեցման նպատակով ձեռնարկված միջոցառումները: Սույն կետով սահմանված բացահայտումը պետք է ներառի բավարար տեղեկություններ, որպեսզի հաճախորդները հնարավորություն ունենան իրազեկ որոշում կայացնելու այն քրաուդֆանդինգի ծառայություններից օգտվելու հետ կապված, որոնց դեպքում առաջանում է շահերի բախում:

143. Հարթակի օպերատորը չպետք է որևէ կերպ ուղղորդի ներդրողներին իր կամ այլ քրաուդֆանդինգի հարթակում հրապարակված որևէ նախագծում ներդրում իրականացնելու համար, ներառյալ՝ ներդրողներին ուղղորդելու համար վճարի կամ ընդունի որևէ վարձատրություն, տրամադրի կամ ընդունի զեղչ կամ այլ հատուցում:»:

6) Կանոնակարգը Հավելված 1-ից հետո լրացնել Հավելված 2-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
10 փետրվարի 2022 թ., N 24-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2022 թվականի փետրվարի 8-ի թիվ 24-Ն որոշման

«Հավելված 2
«Ներդրումային ծառայություններ
մատուցող անձանց գործունեության
նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի

ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԱՌԱՋԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Թողարկողի և նախագծի վերաբերյալ տեղեկությունները

1) թողարկողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում անունը, ազգանունը),
2) թողարկողի գտնվելու վայրը, պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում պետական հաշվառման համարը և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն), կապի միջոցները,
3) թողարկողի ստեղծման ամսաթիվը և փաստացի գործունեություն ծավալելու ժամանակահատվածը,
4) խոշոր բաժնետերերը (անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը (ֆիզիկական անձի դեպքում անունը, ազգանունը, բնակության վայրը), նրանցից յուրաքանչյուրի կապի միջոցը և մասնակցության չափը), կամ խոշոր բաժնետերի բացակայության մասին նշում,
5) կառավարման մարմինների անդամների անունը, ազգանունը, բնակության վայրը, կապի միջոցը, զբաղեցրած պաշտոնը, իրավասություններն ու պարտականությունները,
6) թողարկողի կողմից իրականացվող գործունեության նկարագիրը, այդ թվում՝ առաջարկվող ապրանքները կամ ծառայությունները,
7) հղում թողարկողի հրապարակած վերջին տարեկան հաշվետվության (իսկ մեկ տարուց պակաս գործունեություն ծավալած թողարկողի դեպքում թողարկողի գործունեության ողջ ժամանակահատվածի համար կազմված հաշվետվության (առկայության դեպքում)) ինտերնետային էջին (ինտերնետային էջի բացակայության դեպքում հաշվետվությունը կցվում է քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթղթին), ինչպես նաև՝ հիմնական ֆինանսական ցուցանիշները տարեկան կտրվածքով վերջին երեք տարվա համար (երեք տարուց պակաս գործունեություն ծավալած թողարկողի դեպքում թողարկողի գործունեության ողջ ժամանակահատվածի համար),
8) անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում ֆինանսական վիճակը բնութագրող էական ցուցանիշների հակիրճ նկարագրությունը,
9) թողարկողի պարտավորությունների հակիրճ նկարագրությունը (փոխառության, վարկի, թողարկած բաժնային և ոչ բաժնային արժեթղթերի և այլ էական պարտավորությունների ծավալը),
10) նախագծի նկարագրությունը, այդ թվում՝ նպատակը:

2. Քրաուդֆանդինգի առաջարկի իրականացման ընթացակարգը և դրամական միջոցների ներգրավման պայմանները

1) նախագծի ֆինանսավորման համար անհրաժեշտ նվազագույն նպատակային գումարը, ինչպես նաև տվյալ նախագծի համար նախկինում իրականացված քրաուդֆանդինգի առաջարկների քանակը և ներգրավված միջոցների ընդհանուր մեծությունը,
2) առավելագույն գումարը, որը տվյալ քրաուդֆանդինգի առաջարկի միջոցով նախատեսվում է հավաքագրել (եթե առավելագույն գումարը տարբեր է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված նպատակային գումարից),
3) նախագծի ֆինանսավորման համար անհրաժեշտ նպատակային գումարի ներգրավման վերջնաժամկետը և դրույթ հետևյալ բովանդակությամբ.

«Նախագծի ֆինանսավորման համար անհրաժեշտ նպատակային գումարի ներգրավման վերջնաժամկետը ....թ. է: Այնուամենայնիվ, եթե քրաուդֆանդինգի առաջարկի իրականացման ընթացքում նախագծում ներդրում կատարելու վերաբերյալ ներկայացված հայտերում նշված ծավալը բավարար լինի նպատակային գումարը հավաքագրելու համար, կամ քրաուդֆանդինգի առաջարկը իրավական ակտերով սահմանված դեպքերում չեղյալ համարվի, քրաուդֆանդինգի առաջարկը կարող է ավարտվել ավելի շուտ, քան նախատեսված վերջնաժամկետն է:»,

4) նախագծի ֆինանսավորման համար անհրաժեշտ նպատակային գումարը (միաժամանակ նվազագույն և առավելագույն նպատակային գումար նախատեսված լինելու դեպքում նվազագույն նպատակային գումարը) սահմանված ժամկետում չհավաքագրելու դեպքում հետևանքների մասին տեղեկություններ,
5) տվյալ նախագծում թողարկողի կողմից նախատեսվող ներդրումների մեծությունը,
6) ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողների համար մտածելու ժամանակի առկայությունը (բացակայությունը) և պայմանները:

3. Ռիսկային գործոնները

1) Նախագծին, թողարկողին և քրաուդֆանդինգի հարթակում թողարկվող արժեթղթերին առնչվող էական ռիսկերի նկարագիրը:

4. Քրաուդֆանդինգի հարթակում առաջարկվող արժեթղթերը

1) արժեթղթի տեսակը և դասը,
2) արժեթղթի անվանական արժեքը և քանակը (առկայության դեպքում),
3) արժեթղթերի տեղաբաշխման գինը,
4) թողարկման արժույթը,
5) նախագծում (արժեթղթում) ներդրում կատարելու վերաբերյալ հայտ ներկայացնելու պայմանները, այդ թվում՝ այն նվազագույն և առավելագույն գումարները, որոնք կարող են նշվել նախագծում (արժեթղթում) ներդրում կատարելու վերաբերյալ հայտերում,
6) արժեթղթերի դիմաց վճարման կարգը,
7) արժեթղթերի պահառության իրականացման կարգը,
8) արժեթղթերի մարման կարգը, այդ թվում՝ ժամկետը և մարման գինը (կիրառելիության դեպքում),
9) արժեթղթերով ստանձնած պարտավորությունների կատարման համար երաշխավորության կամ գրավի վերաբերյալ տեղեկություններ (առկայության դեպքում).

ա. երաշխավորություն տրամադրող անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, բնակության վայրը), կապի միջոցները,

բ. երաշխավորության կամ գրավի բնույթը և պայմանները (այդ թվում՝ երաշխավորությունը կամ գրավը ամբողջությամբ, թե մասնակի է ծածկում ստանձնած պարտավորությունը (մասնակիի դեպքում՝ դրա չափը)),

10) թողարկողի պարտավորությունը՝ արժեթղթերի հետգնման հետ կապված, և հետգնման ժամանակաշրջանը, հետգնման պարտավորության բացակայության դեպքում հստակ դրույթ այդ մասին,

11) արժեկտրոնի (շահութաբաժնի, այլ եկամտի) վերաբերյալ տեղեկությունները և վճարման պայմանները, մասնավորապես՝ մեծությունը, հաշվարկման առաջին օրը, վճարման պարբերականությունը, վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի), օրերի հաշվարկման կարգը (օրինակ՝ 30/360, Փաստացի/Փաստացի, Փաստացի/360 և այլն): Եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացվում է նաև տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի (դրա փոփոխության) մասին տեղեկատվություն: Եթե պարտատոմսը զրոյական արժեկտրոնով է, ապա նշվում է դրա մասին:

12) արժեթղթերից բխող իրավունքների և պարտավորությունների ընդհանուր նկարագրությունը, այդ թվում՝

ա. արժեթղթերից բխող իրավունքների սահմանափակումների նկարագրությունը, ներառյալ՝ արժեթղթերի ազատ շրջանառելիությունը սահմանափակող ցանկացած պայմանագրի առկայությունը և սահմանափակման նկարագրությունը,

բ. արժեթղթերի վերավաճառքի հնարավորությունը,

գ. բաժնային արժեթղթերից բխող իրավունքները (շահութաբաժնի ստացման իրավունքը (շահութաբաժնի բաշխման քաղաքականություն), ձայնի իրավունքը, նույն դասի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում նախապատվության իրավունքը, լուծարման դեպքում մնացած գույքից բաժին ստանալու իրավունքը, փոխարկման իրավունքը):

5. Վճարները, ծախսերը և այլ տեղեկություններ

1) հարթակի օպերատորի կողմից ներդրման համար գանձվող միջնորդավճարը, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև հարկային վճարների մեծությունն ու դրանց վճարման համառոտ նկարագիրը,

2) տեղեկատվություն, թե որտեղից և ինչպես կարելի է անվճար լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել նախագծի և թողարկողի վերաբերյալ,

3) տեղեկատվություն, թե ներդրողը ինչպես և ում կարող է դիմել հարցերի դեպքում կամ բողոքել՝ կապված ներդրման, թողարկողի կամ հարթակի օպերատորի գործունեության հետ:»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 272-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով կարգավորվող շուկայի օպերատորին թույլատրել քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման շրջանակներում իրականացնել հաշվի օպերատորի ծառայություններ՝ քրաուդֆանդինգի ծառայությունների արագ և արդյունավետ մատուցումը ապահովելու համար,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 175-րդ, 176-րդ հոդվածները և 200-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ««Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մարտի 1-ի թիվ 44-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» կանոնակարգ 5/10–ը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 84.2-րդ կետով.

«84.2. Հաշվարկային համակարգի անդամ կարող է լինել կարգավորվող շուկայի օպերատորը՝ միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մայիսի 25-ի «Կարգավորվող շուկայի օպերատորի լրացուցիչ գործունեության տեսակները» կանոնակարգ 5/11-ի 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման հետ կապված հաշվի օպերատորի ծառայություններ մատուցելու համար: Կարգավորվող շուկայի օպերատորի համապատասխան միջնորդագրի հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան կարգավորվող շուկայի օպերատորին շնորհում է սահմանափակ իրավասությամբ հաշվի օպերատորի կարգավիճակ՝ քրաուդֆանդինգի ծառայությունների մասով, որի լիազորությունների շրջանակը սահմանվում է Կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրով: Կարգավորվող շուկայի օպերատորի՝ որպես քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման շրջանակում հաշվի օպերատորի վրա տարածվում են հաշվի օպերատորին վերաբերող դրույթները, եթե այլ բան նախատեսված չէ սույն կանոնակարգով, Կենտրոնական բանկի այլ նորմատիվ իրավական ակտերով կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

10 փետրվարի 2022 թ., N 25-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 8-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մայիսի 25-ի թիվ 80-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով կարգավորվող շուկայի օպերատորին թույլատրել իրականացնել լրացուցիչ գործունեության տեսակներ և միաժամանակ սահմանել այդ գործունեությունների իրականացման նկատմամբ արդյունավետ և ներդրողների շահերը պաշտպանող պահանջներ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 103-րդ հոդվածի 7-րդ մասը և 112-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մայիսի 25-ի ««Կարգավորվող շուկայի օպերատորի լրացուցիչ գործունեության տեսակները» կանոնակարգ 5/11-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 253-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 80-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի լրացուցիչ գործունեության տեսակները» կանոնակարգ 5/11-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) Կանոնակարգի 1-ին կետը «տեսակները» բառից հետո լրացնել «և դրանց իրականացման նկատմամբ պահանջները» բառերով:

2) Կանոնակարգի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) «Օրենք»՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
2) «Օպերատոր»՝ կարգավորվող շուկայի օպերատոր,
3) «Կենտրոնական բանկ»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
4) «Վարկային ռեսուրսների առևտուր»՝ վարկային պայմանագրերի միջոցով որոշակի ժամկետով և տոկոսադրույքով Հայաստանի Հանրապետության դրամով կամ արտարժույթով արտահայտված դրամական միջոցների տրամադրումը՝ կարգավորվող շուկայի օպերատորի կանոններով սահմանված կարգով,
5) «Կանոնակարգ 4/07»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07:»:

3) Կանոնակարգի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն Քաղաքացիական օրենսգրքում, Օրենքում, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրեն-

* *Ոչ պաշտոնական հրապարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 8-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

քում կամ դրանց հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերում կիրառվող նշանակությունը:»:

4) Կանոնակարգի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ ենթակետով.

«4) սույն կանոնակարգի 4.1-րդ և 4.2-րդ կետերի համաձայն՝ քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի գործունեություն:»:

5) Կանոնակարգի 2-րդ գլուխը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-րդ և 4.2-րդ կետերով.

«4.1. Սույն կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված գործունեությունն իրականացնելու դեպքում Օպերատորը մատուցում է Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունման և հաղորդման ներդրումային ծառայություն և Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացում:

4.2. Սույն կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված գործունեությունն իրականացնելու դեպքում Օպերատորի վրա տարածվում են (ըստ կիրառելիության) քրաուդֆանդինգի ծառայությունների և քրաուդֆանդինգի հարթակի օպերատորների համար «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև Օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հետևյալ պահանջները՝ Օրենքի 27-րդ հոդվածի 4–րդ մասը, 50-53-րդ հոդվածները (Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով նախատեսված ծառայությունները մատուցող աշխատակիցների որակավորման մասով), 61-րդ հոդվածը, Օրենքի 6-րդ գլուխը, 7-րդ գլուխը (միայն կանոնադրական և ընդհանուր կապիտալի մասով), 8-րդ գլուխը (միայն տեղաբաշխման մասին հաշվետվության և 83-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն հրապարակվող տեղեկությունների մասով), 10-րդ գլուխը, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերը:»:

6) Կանոնակարգի 3-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 3

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5. Լրացուցիչ գործունեության յուրաքանչյուր տեսակի իրականացման թույլտվություն ստանալու համար Օպերատորը էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով (անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային փոստով) Կենտրոնական բանկ է ներկայացնում.

1) լրացուցիչ գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու դիմումը,
2) Օպերատորի կանոնների կամ դրանց փոփոխությունների գրանցման միջնորդագիրը՝ համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ի,
3) լրացուցիչ գործունեության իրականացումն ապահովող կանոնները (դրանց փոփոխությունները, լրացումները): Լրացուցիչ գործունեության իրականացումն ապահովող կանոնների (դրանց փոփոխությունների, լրացումների) նկատմամբ կիրառվում են Օրենքով սահմանված՝ Օպերատորի կանոնների (դրանց փոփոխությունների, լրացումների) և դրանց գրանցման վերաբերյալ պա-

հանջները: Քրաուդֆանդինգի ծառայությունների մատուցման դեպքում կանոնները (դրանց փոփոխությունները, լրացումները) առնվազն պետք է ներառեն թողարկողների ընտրության չափանիշներին համապատասխանության գնահատման ընթացակարգը, գործունեության անընդհատության ծրագիրը, շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը, հարթակի օպերատորի գործառույթների պատվիրակման կանոնները, տվյալների մշակման և պահպանման համակարգերի նկարագրությունը, հաճախորդներից ստացված բողոքների լուծման ընթացակարգերը:

4) լրացուցիչ գործունեության իրականացման հետ կապված ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգը (ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգի փոփոխությունները, լրացումները): Ընդ որում՝

ա. ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգերը նկարագրվում են Օպերատորի ներքին իրավական ակտերում, որոնք կարող են լինել կարգերի, ընթացակարգերի, կանոնակարգերի, հրահանգների, ուղեցույցների և այլ ակտի տեսքով,

բ. ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգում բացահայտվում են լրացուցիչ գործունեության իրականացումից բխող բոլոր էական ռիսկերը, այդ թվում՝ ֆինանսական, գործառնական, իրավական, բարի համբավի, Օպերատորի համար այդ ռիսկերի ընդունելի մակարդակը, ռիսկերի հսկման և ընդունելի մակարդակում պահելու մեխանիզմները,

գ. Օպերատորն ապահովում է ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգերը նկարագրող ներքին իրավական ակտերի հասանելիությունն իր անձնակազմին և անձնակազմի կողմից դրանց տեղեկացվածությունը՝ իրենց կողմից իրականացվող գործառույթների մասով,

դ. ռիսկերի կառավարման ներքին ընթացակարգի դրույթների՝ արդեն իրականացվող լրացուցիչ գործունեությամբ պայմանավորված փոփոխությունների վերաբերյալ առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորը տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

6. Կենտրոնական բանկը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են սույն կանոնակարգի 5-րդ կետով նախատեսված փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիությունը գնահատելու համար՝ սահմանելով դրանց ներկայացման վերջնաժամկետ:

7. Կենտրոնական բանկը կարող է մերժել լրացուցիչ գործունեության իրականացման թույլտվության տրամադրումը, եթե.

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին, կամ ներկայացվել են կեղծ կամ թերի փաստաթղթեր, կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են ոչ արժանահավատ տեղեկություններ,
2) Օպերատորը հրաժարվում է ներկայացնել կամ սահմանված ժամկետում չի ներկայացնում սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված տեղեկությունները և փաստաթղթերը,
3) Օպերատորը չի բավարարում կամ կարող է չբավարարել Օրենքով և այլ իրավական ակտերով լրացուցիչ գործունեության իրականացման համար սահմանված պահանջներին,
4) լրացուցիչ գործունեության իրականացումն ապահովող կանոնների նախագծերը հակասում են Օրենքին և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, կամ կանոնների դրույթները ճշգրիտ և բավականաչափ հստակ չեն, ինչի պատճառով կարող են վտանգվել շուկայի բնականոն գործունեությունը կամ ներդրողների շահերը, կամ

5) չի վճարվել Կենտրոնական բանկի կողմից սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափը:

8. Կենտրոնական բանկը լրացուցիչ գործունեության իրականացման վերաբերյալ թույլտվություն տալու կամ այն մերժելու վերաբերյալ որոշումը կայացնում է սույն կանոնակարգով սահմանված բոլոր փաստաթղթերը ստանալու պահից 45 օրվա ընթացքում: Սույն կետում սահմանված ժամկետում դիմումը չմերժելու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին Օպերատորին չտեղեկացնելու դեպքում լրացուցիչ գործունեության իրականացման վերաբերյալ թույլտվությունը համարվում է տրամադրված:

9. Եթե դիմումը քննելու ընթացքում դիմումով և դրան կից ներկայացված փաստաթղթերով պահանջվող տեղեկություններում տեղի են ունեցել փոփոխություններ, ապա Օպերատորը պարտավոր է ներկայացնել նաև փոփոխված տեղեկությունները մինչև Կենտրոնական բանկի կողմից լրացուցիչ գործունեության իրականացման վերաբերյալ թույլտվությունը տալու կամ այն մերժելու վերաբերյալ որոշման կայացումը: Այդ դեպքում դիմումը ներկայացված է համարվում փոփոխված տեղեկությունները և փաստաթղթերը Կենտրոնական բանկի կողմից ստանալու պահից:

10. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար Օպերատորի կողմից ներկայացված լրացուցիչ գործունեության իրականացման վերաբերյալ թույլտվության ստացման դիմումի քննության 45-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկություններ ստանալուց հետո դիմումի քննության ժամկետը չպետք է գերազանցի 45-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

11. Լրացուցիչ գործունեության իրականացման թույլտվության վերաբերյալ որոշում ընդունելու հետ միաժամանակ Կենտրոնական բանկը Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցում է լրացուցիչ գործունեության իրականացումն ապահովող կանոնները (դրանց փոփոխությունները, լրացումները):

12. Կենտրոնական բանկը լրացուցիչ գործունեության իրականացման վերաբերյալ թույլտվություն տրամադրելու կամ մերժելու մասին որոշումն այն կայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Օպերատորին:»:

7) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 4. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Լրացուցիչ գործունեության իրականացումը կարող է դադարեցվել Օպերատորի դիմումի հիման վրա կամ Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ:

14. Լրացուցիչ գործունեության իրականացումը կարող է դադարեցվել Օպերատորի դիմումի հիման վրա պայմանով, որ Օպերատորի հաճախորդների օրինական շահերը պաշտպանված են:

15. Կենտրոնական բանկը կարող է մերժել սույն կանոնակարգի 14-րդ կետով նախատեսված դիմումը, եթե առկա են բավարար հիմքեր եզրակացնելու, որ լրացուցիչ գործունեության իրականացման դադարեցումը կարող է վնասել Օպերատորի հաճախորդների շահերը կամ վտանգել ֆինանսական կայունությունը:

16. Կենտրոնական բանկը սույն կանոնակարգի 14-րդ կետով նախատեսված դիմումը ստանալու պահից՝ 30 օրվա ընթացքում, որոշում է կայացնում լրացուցիչ գործունեության իրականացումը դադարեցնելու կամ դիմումը մերժելու վերաբերյալ: Սույն կետում սահմանված ժամկետում դիմումը չմերժելու կամ նշված ժամկետում կասեցնելու մասին Օպերատորին չտեղեկացնելու դեպքում Օպե-

րատորի կողմից լրացուցիչ գործունեության իրականացումը դադարեցնելու վերաբերյալ թույլտվությունը համարվում է տրված:

17. Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ լրացուցիչ գործունեության իրականացումը կարող է դադարեցվել, եթե

1) լրացուցիչ գործունեության իրականացման թույլտվության ստացման համար դիմելիս Օպերատորը Կենտրոնական բանկ է ներկայացրել ապակողմնորոշիչ կամ ոչ արժանահավատ տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր,
2) Օպերատորը հրապարակել կամ Կենտրոնական բանկ է ներկայացրել ապակողմնորոշիչ, ոչ արժանահավատ տեղեկատվություն կամ կեղծ փաստաթղթեր,
3) Օպերատորը կամ նրա ղեկավարները թույլ են տվել Օրենքի, այլ օրենքների, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև լրացուցիչ գործունեության իրականացումն ապահովող կանոնների պահանջների պարբերական (երկու և ավելի) կամ էական խախտումներ,
4) Օպերատորն այլևս չի բավարարում այն պահանջներին, որոնց հիման վրա տրամադրվել է լրացուցիչ գործունեության իրականացման թույլտվությունը,
5) Օպերատորը սահմանված ժամկետում չի իրականացրել Կենտրոնական բանկի կողմից Օրենքի կամ դրա հիման վրա Կենտրոնական բանկի ընդունած նորմատիվ իրավական ակտերի համաձայն տրված հանձնարարականները կամ
6) խախտվել են Օրենքով և դրա հիման վրա ընդունած նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվները:

18. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի տեղեկություններ ստանալու համար Օպերատորի կողմից ներկայացված դադարեցման դիմումի քննության 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել: Անհրաժեշտ տեղեկությունները ստանալուց հետո դիմումի քննության ժամկետը չպետք է գերազանցի 30-օրյա ժամկետի և մինչև կասեցումն ընկած օրերի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

19. Լրացուցիչ գործունեության իրականացումը դադարեցնելու մասին Կենտրոնական բանկի որոշման պատճենն այն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տրամադրվում է Օպերատորին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

10 փետրվարի 2022 թ., N 26-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով սահմանել քրաուդֆանդինգի ծառայությունների վերաբերյալ հրապարակվող տեղեկությունների շրջանակը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի ««Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը 28-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1- 28.6-րդ կետերով.

«28.1. Ի լրումն սույն կանոնակարգի 27-րդ և 28-րդ կետով սահմանված տեղեկատվության, քրաուդֆանդինգի ծառայությունների մասին ներկայացվում են սույն կանոնակարգի 28.2-րդ և 28.3-րդ կետերով սահմանված տեղեկությունները:

28.2. Ի լրումն ներդրումային ծառայություններ մատուցող անձանց համար սույն կանոնակարգով սահմանված տեղեկությունների, քրաուդֆանդինգի հարթակի օպերատորի կողմից ներկայացվում է առնվազն.

1) հայտարարություն առ այն, որ քրաուդֆանդինգի հարթակի միջոցով առաջարկվող արժեթղթերում ներդրումները կարող են պարունակել զգալի ռիսկեր և կարող են հանգեցնել ներդրված գումարի ամբողջությամբ կամ մասնակի կորստի,
2) տեղեկատվություն առ այն, որ ներդրողը պետք է մանրամասն ծանոթանա քրաուդֆանդինգի առաջարկի հետ կապված փաստաթղթերին և այլ տեղեկություններին՝ իրազեկ որոշում կայացնելու համար,
3) տեղեկատվություն ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ հանդիսացող ներդրողների համար մտածելու ժամանակի առկայության (բացակայության), դրա տևողության և այլ մանրամասների մասին,
4) ներդրողի կողմից ներդրման առավելագույն կամ նվազագույն գումարի սահմանափակումների կամ դրանց բացակայության մասին տեղեկատվություն:

28.3. Քրաուդֆանդինգի հարթակում՝ յուրաքանչյուր թողարկողի էջում, առնվազն ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) թողարկողի վերաբերյալ տեղեկություններ՝ թողարկողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում անունը, ազգանունը),

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 8-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

2) թողարկողի գտնվելու վայրը, պետական գրանցման համարը (անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում պետական հաշվառման համարը և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն), կապի միջոցները (էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար),
3) նախագծի հակիրճ նկարագիրը, այդ թվում՝ նախագծի ֆինանսավորման համար անհրաժեշտ նպատակային գումարի մեծությունը (միաժամանակ նվազագույն և առավելագույն նպատակային գումար նախատեսված լինելու դեպքում՝ նվազագույն և առավելագույն նպատակային գումարը), ֆինանսավորման ներգրավման նպատակը, նախագծին առնչվող հիմնական ռիսկերի նկարագիրը,
4) նախագծի գովազդը (առկայության դեպքում), որը պետք է համապատասխանի «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ով սահմանված պահանջներին,
5) նախագծի ֆինանսավորման համար թողարկվող արժեթղթի տեսակը, դասը, տեղաբաշխման գինը,
6) մշտապես թարմացվող տեղեկատվություն առ այն, թե նախագծի համար որքան ներդրում է կատարվել, այդ թվում՝ մտածելու ժամանակի ընթացում չեղյալ չհամարված հայտերի հիման վրա,
7) քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ ամփոփ փաստաթուղթը,
8) թողարկողի գործարար ծրագիրը,
9) թողարկողի վերջին հաշվետու ֆինանսական տարվա տարեկան հաշվետվությունները (առկայության դեպքում), իսկ 1 տարուց պակաս գործունեություն ծավալած թողարկողի դեպքում հաշվետվությունները ներկայացվում են թողարկողի գործունեության ողջ ժամանակահատվածի համար, անհատ ձեռնարկատեր հանդիսացող թողարկողի դեպքում՝ ֆինանսական վիճակը բնութագրող էական ցուցանիշների հակիրճ նկարագրությունը,
10) թողարկողին և նրա կողմից տվյալ քրաուդֆանդինգի հարթակում հրապարակվող քրաուդֆանդինգի առաջարկին առնչվող այլ տեղեկություններ:

28.4. Քրաուդֆանդինգի առաջարկի ավարտից հետո թողարկողի անձնական էջում պահպանվում է քրաուդֆանդինգի առաջարկի վերաբերյալ հրապարակված ողջ տեղեկատվությունը հաշվի գործողության ողջ ընթացքում:

28.5. Քրաուդֆանդինգի հարթակում՝ յուրաքանչյուր ներդրողի անձնական էջում, ներկայացվում է առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) տեղեկատվություն ներդրողի պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ կարգավիճակի վերաբերյալ,
2) ներկայացված հայտերի, ինչպես նաև կատարված ներդրումների պատմությունը:

28.6. Սույն կանոնակարգի 28.1-28.5-րդ կետերում կիրառվող հասկացություններն ունեն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ում կիրառվող նշանակությունը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
10 փետրվարի 2022 թ., N 27-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել քրաուդֆանդինգի հարթակում գործարքների սահուն և անընդհատ իրականացման և հաստատման ընթացակարգերը և նվազեցնել քրաուդֆանդինգի հարթակի գործունեության հետ կապված գործառնական ռիսկերը՝ սահմանելով քրաուդֆանդինգի հարթակի համար տեղեկատվական անվտանգության նվազագույն պահանջներ,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 111-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի ««Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին» թիվ 173-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) և որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման 2-րդ կետում «և լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցող անձինք» բառերը փոխարինել «, լևերիջով գործարքների, այդ թվում՝ ֆորեքս գործարքների հետ կապված ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ մատուցող անձինք և քրաուդֆանդինգի հարթակի օպերատորները» բառերով:

2) Կարգի 4-րդ կետում.

ա. 4-րդ ենթակետը «է» պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ը» պարբերությամբ.

«ը.Քրաուդֆանդինգի հարթակի օպերատորները:»,

բ. 4-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ ենթակետ.

«4.1) Քրաուդֆանդինգի հարթակի օպերատոր՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07-ում և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի մայիսի 25-ի թիվ 80-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի լրացուցիչ գործունեության տեսակները» կանոնակարգ 5/11-ում կիրառվող նշանակության:»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 8-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

3) Կարգի 20.1-րդ կետը «Բանկերի» բառից հետո լրացնել «և քրաուդֆանդինգի հարթակի օպերատորների» բառերով:
4) Կարգի 20.2-րդ կետում «բանկերը» բառը փոխարինել «սույն կարգի 20.1-րդ կետով սահմանված կազմակերպությունները» բառերով:
5) Կարգի 20.3-րդ կետի 3-րդ ենթակետում «բանկին» բառը փոխարինել «սույն կարգի 20.1-րդ կետով սահմանված կազմակերպությանը» բառերով:
6) Կարգի 20.6-րդ կետում «Բանկերը» բառը փոխարինել «Սույն կարգի 20.1-րդ կետով սահմանված կազմակերպությունները» բառերով:
7) Կարգի 20.7-րդ կետում «բանկի» բառը փոխարինել «սույն կարգի 20.1-րդ կետով սահմանված կազմակերպության», իսկ «բանկը» բառը՝ «սույն կարգի 20.1-րդ կետով սահմանված կազմակերպությունը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
10 փետրվարի 2022 թ., Ն 28-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 53-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով լրացուցիչ ժամանակ տրամադրել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի ապրիլի 27-ի թիվ 53-Ն որոշման հասցեատերերին որոշմամբ սահմանված պահանջները կատարելու համար,

կարևորելով արտասահմանյան դրամական փոխանցումների անընդհատության և հայաստանյան վճարահաշվարկային համակարգին սահուն ինտեգրման ապահովումը,

հիմք ընդունելով «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2021 թվականի ապրիլի 27-ի ««Դրամական միջոցների փոխանցման Հայաստանյան և արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի համագործակցության կարգը» կանոնակարգ 19.1-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի ապրիլի 29-ի թիվ 105-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 53-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Դրամական միջոցների փոխանցման արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվություն ունեցող հայաստանյան մասնակիցները արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի հետ համագործակցությունը 2022 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած պետք է իրականացնեն հայաստանյան վճարահաշվարկային համակարգի միջոցով: Հայաստանյան մասնակիցներին տրված՝ դրամական միջոցների փոխանցման արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվությունը ուժը կորցրած է ճանաչվում այն պահից, երբ տեղի է ունեցել հետևյալ իրադարձություններից առնվազն մեկը.

1) Լրացել է սույն կետում նշված ժամկետը
2) Կենտրոնական բանկը հայաստանյան մասնակցին գրավոր տեղեկացրել է այն մասին, որ Հայաստանյան համակարգի օպերատորը սույն որոշմամբ սահմանված կարգով ստացել է Կենտրոնական բանկի թույլտվությունը համագործակցելու այն արտասահմանյան համակարգի հետ, որին մասնակցելու թույլտվություն էր տրվել հայաստանյան մասնակցին, և այդ օրվանից հետո անցել է երեք ամիս:

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2022 թ. փետրվարի 14-ին (ՀՀԳՏ, 15.02. 2022):

2. Որոշմամբ հաստատված Կանոնակարգ 19.1-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգը լրացնել նոր 10.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.1. Արտասահմանյան համակարգի հետ համագործակցության թույլտվություն տալու դեպքում Կենտրոնական բանկը թույլտվության տրամադրման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է այն կազմակերպություններին, որոնք դեռևս ունեն արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվություն:»:

2) Կանոնակարգի 17-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Արտասահմանյան համակարգի օպերատորի գրանցման երկրի օրենսդրության կամ քաղաքականության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության կամ Հայաստանյան համակարգի օպերատորի քաղաքականության համաձայն Հայաստանյան համակարգի հաշվարկային բանկում հաշիվ ունենալու սահմանափակում նախատեսված լինելու դեպքում՝ դրույթ, համաձայն որի դրամական փոխանցումների իրականացումը և վերջնահաշվարկի կատարումը ապահովելու նպատակով.

ա. Արտասահմանյան համակարգի օպերատորը պարտավոր է ընտրել Հայաստանյան համակարգի մասնակից, որը կհանդիսանա Արտասահմանյան համակարգի օպերատորի հաշվարկային գործակալ (այսուհետ՝ Հայաստանյան համակարգի հաշվարկային գործակալ մասնակից կամ Հաշվարկային գործակալ),

բ. Արտասահմանյան համակարգի օպերատորը պարտավոր է ունենալ Հաշվարկային գործակալի հետ կնքած պայմանագիր և վերջինիս տրամադրել համապատասխան ապահովվածություն, որի չափով նախատեսում է կատարել փոխանցումներ: Հաշվարկային գործակալը և արտասահմանյան համակարգի օպերատորը ազատ են ընտրել ապահովվածության տրամադրման կարգը (այդ թվում՝ որպես ապահովվածության տրամադրում նախատեսել բանկային երաշխիքի տրամադրումը կամ համանման այլ գործիքների տրամադրումը) և Հաշվարկային գործակալի կողմից այն պահելու եղանակը՝ պայմանով, որ ընտրված կարգը կամ եղանակը չեն հակասում Հայաստանյան համակարգի կանոններին, Հայաստանի Հանրապետության օրենքներին և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին:

գ. Հաշվարկային գործակալը պարտավոր է հաշվարկային բանկում ունենալ անհրաժեշտ ապահովվածություն, որը բավարար կլինի ապահովելու ինչպես իր սեփական փոխանցումները, այնպես էլ արտասահմանյան համակարգի օպերատորի կողմից տրամադրված ապահովվածության հաշվին վերջինիս նախաձեռնած փոխանցումները:»:

3) Կանոնակարգի 17-րդ կետի 12-րդ ենթակետը «համակարգերով» բառից հետո լրացնել «)» կետադրական նշանով:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

14 փետրվարի 2022 թ., N 30-Ն

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՓԵՏՐՎԱՐ 2022)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 59
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 63
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 82
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 83
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 93
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ-ի կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից փնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 111
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 121
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 123
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 132
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	*2022 թ. հունվար*	*2022 թ. հունվարի իրական աճի փոփոխությունը 2021 թ. հունվարի նկատմամբ (%)*	*2022 թ. Փետրվար*	*2022 թ. փետրվարի իրական աճի փոփոխությունը 2021 թ. փետրվարի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		15.4		9.0
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	177688.2	16.6	187590.1	3.7
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	14114.8	3.0	18620.6	6.3
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	230850.3	11.5	258648.6	5.3
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	156716.0	21.2	159581.7	19.0
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	885.2	19.2	793.7	25.1
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	251274[1]	-1.5[2]	252810[3]	0.1[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2022 թ.	*Գնաճ*	*Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը*	*Գների փոփոխությունը շինարարությունում*	*Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.6	0.9	0.8	4.0
Փետրվար	0.1	3.7	1.3	0.2
2022 թ. հունվար - փետրվարը 2021 թ. հունվար - փետրվարի նկատմամբ	6.8	10.7	13.7	15.3

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	2020	2021	2022
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	1.4	2.2	1.6
Փետրվար	-0.2	0.6	0.1
Մարտ	0.5	1.0	
Ապրիլ	0.9	1.3	
Մայիս	-0.1	-0.4	
Հունիս	-1.4	-0.8	
Հուլիս	-2.1	-0.5	
Օգոստոս	-0.1	0.4	
Սեպտեմբեր	-0.2	-0.1	
Հոկտեմբեր	0.5	0.7	
Նոյեմբեր	1.3	1.7	
Դեկտեմբեր	3.4	1.6	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.3	4.5	7.1
Փետրվար	-0.5	5.3	6.5
Մարտ	-0.1	5.8	
Ապրիլ	0.9	6.2	
Մայիս	1.2	5.9	
Հունիս	1.7	6.5	
Հուլիս	1.5	8.2	
Օգոստոս	1.8	8.8	
Սեպտեմբեր	1.4	8.9	
Հոկտեմբեր	1.3	9.1	
Նոյեմբեր	1.6	9.6	
Դեկտեմբեր	3.7	7.7	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ [5]

Անվանում	*2022 թ. փետրվարը 2021 թ. փետրվարի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
Գնաճ	**6.5**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	11.4	4.30
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	7.7	0.29
Հագուստ և կոշիկ	9.3	0.20
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	2.5	0.40
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	4.9	0.22
Առողջապահություն	1.5	0.12
Տրանսպորտ	4.0	0.38
Կապ	0.0	0.00
Հանգիստ և մշակույթ	10.1	0.17
Կրթություն	1.4	0.06
Ռեստորաններ և հյուրանոցներ	5.1	0.05
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	3.1	0.20

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2020	2021	2022
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.0	0.7	0.3
Փետրվար	0.1	0.8	0.6
Մարտ	0.0	0.8	
Ապրիլ	0.5	0.6	
Մայիս	0.0	0.4	
Հունիս	-0.1	0.3	
Հուլիս	-0.1	0.3	
Օգոստոս	0.1	0.3	
Սեպտեմբեր	0.3	0.3	
Հոկտեմբեր	0.3	0.4	
Նոյեմբեր	0.3	0.6	
Դեկտեմբեր	0.9	0.5	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.4	3.0	5.8
Փետրվար	0.4	3.7	5.6
Մարտ	0.3	4.6	
Ապրիլ	0.8	4.6	
Մայիս	0.8	5.1	
Հունիս	0.7	5.5	
Հուլիս	0.8	5.9	
Օգոստոս	0.8	6.1	
Սեպտեմբեր	0.9	6.1	
Հոկտեմբեր	1.2	6.2	
Նոյեմբեր	1.4	6.6	
Դեկտեմբեր	2.2	6.2	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2022 թ. փետրվարը 2021 թ. փետրվարի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ, այդ թվում՝	**5.6**	
Հաց ցորենի, բարձր տեսակի	9.2	0.40
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	8.3	0.26
Պանիր կովի կաթից	17.6	0.25
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած	31.7	0.25
Բենզին	31.2	0.25
Իշխան՝ թարմ կամ պաղեցրած	36.0	0.21
Միջազգային հանգստի կազմակերպման համալիր ծառայություններ	22.2	0.12
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	1.7	0.10
Պանիր տնական	16.9	0.09
Շաքարավազ	18.2	0.09
Կարագ սերուցքային	7.8	0.09
Հավի միս՝ (ամբողջական հավ) թարմ, պաղեցրած	6.9	0.09
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության	13.3	0.08
Ախտորոշման այլ ծառայություններ (COVID)	-26.0	-0.08
Օդային տրանսպորտի միջազգային չվերթներ իրականացնող ծառայություններ	-15.3	-0.10

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայած տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2022 թ. հունվար (մլն ԱՄՆ դոլար)	2022 թ. հունվարը 2021 թ. հունվարի նկատմամբ (%)	2022 թ. հունվար – փետրվար (մլն ԱՄՆ դոլար)	2022 թ. հունվար - փետրվարը 2021 թ. հունվար - փետրվարի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	249.2	153.3	503.7	140.1
Ներմուծում *(ՍԻՖ)*	421.3	167.3	917.0	160.2
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	172.1	192.9	413.3	194.3

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2021 թվական					
	Փետրվար			Հունվար – փետրվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	52262	28828	23434	91170	48831	42339
ԱՄՆ	36916	13770	23146	72232	30418	41814
Ուկրաինա	1244	1713	-469	2208	2463	-255
Ղազախստան	4477	256	4222	7754	531	7223
Գերմանիա	4633	1952	2681	8514	4142	4371
Իսպանիա	915	1238	-323	2019	1718	301
Ֆրանսիա	4329	1503	2825	7885	2707	5178
ԱՄԷ	1290	4851	-3561	3021	6787	-3765
Չինաստան	129	2001	-1872	314	6979	-6665
Թուրքիա	192	451	-260	303	828	-525
Այլ երկրներ	25318	44225	-18907	50732	77524	-26792
Ընդամենը	**131705**	**100789**	**30916**	**246152**	**182927**	**63224**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2022 թվական					
	Փետրվար			Հունվար – փետրվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	82515	36418	46096	123156	59514	63642
ԱՄՆ	41155	21953	19202	82025	35200	46825
Ուկրաինա	1872	1510	362	3505	2955	550
Ղազախստան	5070	705	4365	8367	944	7423
Գերմանիա	5036	3219	1817	9026	6040	2987
Իսպանիա	1057	1700	-643	2034	2647	-613
Ֆրանսիա	6446	1865	4580	10200	3453	6747
ԱՄԷ	2083	2505	-422	5183	5171	12
Չինաստան	108	3254	-3146	328	11234	-10907
Թուրքիա	117	563	-446	195	916	-721
Այլ երկրներ	34662	50326	-15664	63998	83383	-19385
Ընդամենը	**180121**	**124019**	**56102**	**308017**	**211457**	**96559**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2021 թվական					
	Փետրվար			Հունվար – փետրվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	27370	15089	12281	47649	25510	22139
ԱՄՆ	19325	7198	12126	37734	15869	21865
Ուկրաինա	651	897	-246	1154	1288	-134
Ղազախստան	2346	134	2212	4053	277	3776
Գերմանիա	2426	1022	1404	4447	2164	2283
Իսպանիա	479	647	-168	1056	898	159
Ֆրանսիա	2267	786	1482	4121	1414	2707
ԱՄԷ	674	2543	-1869	1577	3550	-1973
Չինաստան	67	1046	-978	164	3644	-3480
Թուրքիա	100	236	-136	158	432	-273
Այլ երկրներ	13258	23096	-9838	26499	40447	-13947
Ընդամենը	**68964**	**52694**	**16270**	**128613**	**95492**	**33121**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2022 թվական					
	Փետրվար			Հունվար – փետրվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	39669	17469	22200	59252	28601	30651
ԱՄՆ	19767	10542	9225	39464	16928	22536
Ուկրաինա	899	725	174	1686	1421	265
Ղազախստան	2435	338	2096	4023	453	3570
Գերմանիա	2418	1546	872	4341	2906	1435
Իսպանիա	507	816	-309	978	1273	-294
Ֆրանսիա	3098	896	2202	4908	1661	3247
ԱՄԷ	1002	1204	-202	2497	2490	7
Չինաստան	52	1561	-1509	158	5408	-5250
Թուրքիա	56	270	-214	94	441	-347
Այլ երկրներ	16647	24155	-7508	30787	40088	-9301
Ընդամենը	**86550**	**59522**	**27028**	**148188**	**101669**	**46519**





ԴԵՊԻ ՀՀ ԱՆՁՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2020	2021				
		I եռ.	II եռ.	III եռ. [4]	IV եռ.	Տարեկան
Դրամական փոխանցումներ	**1311.7**	**316.8**	**423.5**	**450.4**	**421.0**	**1611.6**
Աշխատողների զուտ աշխատավարձ[1]	286.2	63.6	84.6	89.5	82.9	320.6
Աշխատողների աշխատավարձ[2]	368.6	81.9	108.9	115.3	106.8	412.8
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ[3]	57.1	12.7	16.9	17.9	16.5	63.9
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված համախառն եկամուտներ	73.5	16.3	21.7	23.0	21.3	82.3
Անձնական տրանսֆերտներ	940.5	233.4	310.4	328.8	306.9	1179.5
Կապիտալ տրանսֆերտներ	27.9	7.0	11.6	14.2	14.7	47.6

[1] Զուտ աշխատավարձը/եկամուտը սեզոնային աշխատողների կողմից ստացված աշխատավարձն է/եկամուտն է՝ առանց եկամտահարկի, տրանսպորտային ծախսերի և արտերկրում կատարված այլ ծախսումների:

[2] Ներառված չեն վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ տարածքում տեղաբաշխված անկլավային տարածքում ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձերը:

[3] Արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում, քանի որ նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ: Գնահատականը տրված է 2011 թվականից՝ հիմնվելով հարցումների տվյալների վրա:

[4] Տվյալները վերանայվել են:

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2021	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	140.1	139.6	140.5	142.9	140.4	140.8	147.6	147.6	147.5	150.3	155.1	152.4
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	292.5	291.8	293.3	296.4	294.0	298.8	316.4	316.5	318.8	326.4	333.7	327.3
2022	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	155.1	152.2										
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	330.9	330.0										

[1] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների փվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:

[2] Բոլոր փվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

[3] Աճը նշանակում է արժևորում:

[4] Վերանայվել են Իրանի Իսլամական Հանրապետության փվյալները, մասնավորապես՝ ազգային արժույթի փոխարժեքի մասով: Սկսած 2018 թվականի հունվարից՝ ԻԻՀ կենտրոնական բանկի փվյալների փոխարեն օգտագործվել են արտարժույթի շուկայի փվյալները, իսկ ՍԳԻ հաշվարկներում՝ ԻԻՀ վիճակագրական ծառայության փվյալները:

ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (ՍՏԱՆԴԱՐՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԸՍՏ «ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ԿԱԶՄՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ» 6-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ)[1,2]

մլն ԱՄՆ դոլար

	2020	2021				
		I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ	**-478.7**	**-63.0**	**20.4**	**-38.2**	**-430.5**	**-511.3**
կրեդիտ	5566.5	1279.7	1722.6	1919.4	1948.4	6870.1
դեբետ	6045.2	1342.7	1702.2	1957.6	2378.9	7381.4
ԱՊՐԱՆՔՆԵՐ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**-1256.1**	**-164.4**	**-181.9**	**-236.8**	**-571.6**	**-1154.7**
կրեդիտ	3762.6	875.8	1203.7	1378.7	1422.7	4880.8
դեբետ	5018.7	1040.2	1385.5	1615.5	1994.3	6035.5
Ապրանքներ	**-1356.2**	**-228.4**	**-272.8**	**-405.5**	**-670.7**	**-1577.5**
կրեդիտ	2657.6	611.0	848.0	825.8	915.4	3200.3
դեբետ	4013.8	839.4	1120.8	1231.4	1586.1	4777.7
Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի	**-1587.8**	**-231.9**	**-286.0**	**-411.8**	**-691.5**	**-1621.2**
կրեդիտ	2401.8	588.3	817.1	791.3	869.7	3066.5
դեբետ	3989.6	820.2	1103.1	1203.1	1561.2	4687.7
Որից վերաարտահանում (կրեդիտ)	15.6	2.9	3.8	4.3	4.0	14.9
Ապրանքների վերավաճառքի գծով զուտ արտահանում (կրեդիտ)	-	-	-	-	-	-
Ոչ մոնետար ոսկի	231.5	3.5	13.3	6.3	20.8	43.8
կրեդիտ	255.8	22.7	31.0	34.5	45.6	133.8
դեբետ	24.2	19.2	17.7	28.2	24.9	90.0
Ծառայություններ	**100.1**	**64.0**	**90.9**	**168.8**	**99.1**	**422.8**
կրեդիտ	1105.0	264.8	355.6	552.9	507.3	1680.6
դեբետ	1004.8	200.8	264.7	384.1	408.2	1257.8
Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ	36.8	9.3	8.8	12.0	10.6	40.7
կրեդիտ	36.8	9.3	8.8	12.0	10.6	40.7
դեբետ	-	-	-	-	-	-
Ապրանքներ վերամշակման համար հաշվետու երկրում- Ապրանքներ վերադարձված (կր), Ապրանքներ ստացված (դբ)	36.8	9.3	8.8	12.0	10.6	40.7
կրեդիտ	134.7	36.0	39.6	42.5	51.8	169.9
դեբետ	97.9	26.7	30.8	30.4	41.1	129.1
Ապրանքներ վերամշակման համար արտերկրում- Ապրանքներ ուղարկված (կր), Ապրանքներ վերադարձված (դբ)	-	-	-	-	-	-
կրեդիտ	-	-	-	-	-	-
դեբետ	-	-	-	-	-	-
Տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	-8.4	-2.6	-4.2	-4.7	-4.2	-15.8
կրեդիտ	3.1	2.3	3.2	3.5	3.8	12.8
դեբետ	11.5	4.9	7.4	8.2	8.0	28.6
Տրանսպորտ	-181.5	-30.3	-36.1	-54.3	-82.2	-202.8
կրեդիտ	232.4	57.0	79.3	81.4	88.1	305.9
դեբետ	413.9	87.3	115.4	135.7	170.3	508.7
որից՝ Մարդատար	-12.9	-3.2	-3.5	-6.0	-6.4	-19.1
կրեդիտ	10.1	4.6	6.6	9.9	8.1	29.2
դեբետ	23.0	7.8	10.1	15.9	14.5	48.3
Բեռնատար	-164.7	-26.5	-30.2	-44.5	-70.8	-172.1
կրեդիտ	212.3	49.9	68.6	65.7	74.6	258.8
դեբետ	377.0	76.4	98.9	110.2	145.4	430.9
Այլ	-3.9	-0.6	-2.4	-3.8	-4.9	-11.7
կրեդիտ	10.0	2.5	4.1	5.8	5.4	17.9
դեբետ	13.9	3.1	6.5	9.6	10.4	29.6

1	2	3	4	5	6	7
Ծովային տրանսպորտ	-65.4	-13.1	-17.7	-19.5	-24.8	-75.1
կրեդիտ	-	-	-	-	-	-
դեբետ	65.4	13.1	17.7	19.5	24.8	75.1
Օդային տրանսպորտ	-23.9	-1.0	-4.3	-8.5	-14.2	-28.0
կրեդիտ	18.2	9.4	12.2	16.0	14.2	51.8
դեբետ	42.1	10.5	16.4	24.4	28.4	79.8
Տրանսպորտի այլ տեսակներ	-91.8	-15.9	-13.9	-26.0	-42.9	-98.7
կրեդիտ	213.5	47.5	67.0	65.4	73.8	253.7
դեբետ	305.3	63.4	81.0	91.4	116.6	352.4
Փոստային և սուրհանդակային ծառայություններ	-0.3	-0.2	-0.3	-0.3	-0.2	-1.0
կրեդիտ	0.7	0.1	0.1	0.1	0.2	0.4
դեբետ	1.0	0.3	0.3	0.4	0.4	1.5
Ճանապարհորդություն	-14.3	20.9	54.1	147.1	119.9	342.0
կրեդիտ	292.8	63.6	119.5	303.1	234.2	720.4
դեբետ	307.1	42.7	65.4	156.0	114.3	378.4
Գործնական	-49.5	-7.9	-8.2	-4.1	3.3	-17.0
կրեդիտ	40.1	6.4	10.9	25.2	22.8	65.3
դեբետ	89.6	14.3	19.1	29.4	19.5	82.3
Անձնական	35.2	28.8	62.4	151.2	116.6	359.0
կրեդիտ	252.7	57.2	108.6	277.9	211.4	655.1
դեբետ	217.4	28.4	46.3	126.6	94.9	296.1
Շինարարություն	63.9	11.8	15.7	20.3	5.0	52.8
կրեդիտ	77.7	14.9	25.2	23.7	20.6	84.4
դեբետ	13.8	3.1	9.5	3.4	15.6	31.7
Ապահովագրություն և կենսաթոշակային ծառայություններ	-34.0	-5.5	-8.0	-9.8	-11.3	-34.6
կրեդիտ	28.7	6.6	9.3	9.1	9.8	34.8
դեբետ	62.7	12.1	17.3	18.9	21.1	69.4
Ֆինանսական ծառայություններ	-1.6	-1.9	-1.2	-1.8	-2.2	-7.0
կրեդիտ	19.1	3.3	3.7	3.3	3.9	14.2
դեբետ	20.7	5.2	4.8	5.1	6.0	21.2
Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	295.0	77.6	76.6	84.3	101.6	340.2
կրեդիտ	328.5	87.7	86.2	94.6	113.8	382.4
դեբետ	33.5	10.1	9.6	10.3	12.2	42.2
Այլ գործնական ծառայություններ	-59.6	-18.6	-14.7	-24.8	-38.5	-96.5
կրեդիտ	42.4	7.4	8.4	9.6	11.1	36.5
դեբետ	102.0	26.0	23.1	34.3	49.6	133.0
Անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ	-12.8	-3.2	-4.5	-2.7	-2.6	-13.0
կրեդիտ	10.3	2.8	2.0	3.3	3.0	11.1
դեբետ	23.1	6.0	6.5	6.1	5.6	24.2
Պետական ապրանքներ և ծառայություններ	16.6	6.3	4.4	3.0	3.0	16.8
կրեդիտ	33.2	9.9	10.0	9.1	8.3	37.3
դեբետ	16.6	3.6	5.6	6.1	5.3	20.6
ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**-196.1**	**-105.7**	**-76.5**	**-92.9**	**-117.0**	**-391.9**
կրեդիտ	460.1	103.5	129.8	134.5	126.1	493.9
դեբետ	656.2	209.2	206.2	227.4	243.1	885.9
Աշխատողների վարձատրություն	286.4	64.2	89.6	95.8	84.1	333.6
կրեդիտ	386.5	86.4	113.3	119.7	111.2	430.6
դեբետ	100.1	22.2	23.8	23.9	27.1	97.0
Ներդրումային եկամուտներ	-482.5	-169.8	-166.0	-188.6	-201.0	-725.5
կրեդիտ	73.7	17.1	16.4	14.8	14.9	63.3
դեբետ	556.2	187.0	182.5	203.4	216.0	788.8

1		2	3	4	5	6
Ուղղակի ներդրումներից	-224.5	-108.1	-94.8	-119.5	-128.1	-450.4
կրեդիտ	6.3	1.9	2.4	1.2	2.0	7.5
դեբետ	230.9	110.0	97.2	120.7	130.0	457.8
Եկամուտ կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցությունից	-127.3	-84.3	-70.4	-93.8	-102.3	-350.7
կրեդիտ	0.0	0.0	0.0	0.0	-	0.0
դեբետ	127.3	84.3	70.4	93.8	102.3	350.7
Շահաբաժիններ և գանձումներ քվազի-կորպորացիաների եկամուտներից	-122.9	-10.2	-41.8	-4.4	-0.8	-57.2
կրեդիտ	0.0	0.0	0.0	0.0	-	0.0
դեբետ	122.9	10.2	41.8	4.4	0.8	57.2
Վերաներդրված եկամուտ	-4.4	-74.1	-28.5	-89.4	-101.5	-293.5
կրեդիտ	-	-	-	-	-	-
դեբետ	4.4	74.1	28.5	89.4	101.5	293.5
Տոկոսավճարներ	-97.2	-23.8	-24.4	-25.7	-25.8	-99.6
կրեդիտ	6.3	1.9	2.4	1.2	2.0	7.5
դեբետ	103.6	25.7	26.8	26.9	27.7	107.1
Պորտֆելային ներդրումներից	-20.5	-10.7	-17.6	-14.3	-17.0	-59.7
կրեդիտ	26.6	5.1	4.6	3.7	3.1	16.6
դեբետ	47.1	15.9	22.2	18.0	20.2	76.3
Ներդրումային եկամուտ կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցությունից	0.2	1.0	-2.4	0.6	0.7	-0.1
կրեդիտ	1.8	1.0	0.6	0.6	0.7	2.8
դեբետ	1.6	-	3.0	0.0	0.0	3.0
Տոկոսավճարներ	-20.8	-11.7	-15.2	-14.9	-17.8	-59.6
կրեդիտ	24.8	4.2	4.0	3.1	2.4	13.8
դեբետ	45.6	15.9	19.2	18.0	20.2	73.3
Այլ ներդրումներից	-237.4	-51.0	-53.7	-54.8	-55.9	-215.5
կրեդիտ	40.7	10.1	9.4	9.9	9.8	39.2
դեբետ	278.1	61.1	63.1	64.7	65.8	254.7
Գանձումներ քվազի-կորպորացիոն եկամուտներից	-	-	-	-	-	-
կրեդիտ	-	-	-	-	-	-
դեբետ	-	-	-	-	-	-
Տոկոսավճարներ	-236.7	-50.8	-53.5	-54.6	-55.7	-214.6
կրեդիտ	40.7	10.1	9.4	9.9	9.8	39.2
դեբետ	277.4	60.9	62.9	64.5	65.5	253.8
Պահուստային ակտիվներից	-	-	-	-	-	-
կրեդիտ	-	-	-	-	-	-
դեբետ	-	-	-	-	-	-
ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**973.5**	**207.1**	**278.7**	**291.4**	**258.1**	**1035.4**
կրեդիտ	1343.8	300.4	389.1	406.2	399.6	1495.4
դեբետ	370.3	93.3	110.4	114.8	141.5	460.0
Պետական կառավարում	219.7	25.0	23.1	18.8	15.0	81.9
կրեդիտ	347.8	52.1	58.3	59.0	71.5	240.9
դեբետ	128.1	27.1	35.3	40.2	56.6	159.1
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և SSUOUԿ	753.8	182.1	255.6	272.6	243.2	953.5
կրեդիտ	996.1	248.3	330.8	347.2	328.1	1254.4
դեբետ	242.2	66.2	75.1	74.6	84.9	300.9
Անձնական տրանսֆերտներ (ընթացիկ տրանսֆերտներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնային տնտեսությունների միջև)	736.2	176.3	246.5	266.0	234.9	923.7
կրեդիտ	940.5	233.4	310.4	328.8	306.9	1179.5
դեբետ	204.3	57.1	63.9	62.8	72.0	255.9
Այլ ընթացիկ տրանսֆերտներ	17.6	5.8	9.1	6.6	8.3	29.8
կրեդիտ	55.5	14.9	20.4	18.4	21.2	74.9
դեբետ	37.9	9.1	11.3	11.8	12.9	45.1

1	2	3	4	5	6	7
2. ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ	**45.4**	**6.7**	**11.1**	**14.1**	**19.9**	**51.8**
կրեդիտ	51.3	9.4	14.5	17.2	22.2	63.3
դեբետ	6.0	2.7	3.3	3.2	2.3	11.4
Կապիտալ տրանսֆերտներ	45.4	6.7	11.1	14.1	19.9	51.8
կրեդիտ	51.3	9.4	14.5	17.2	22.2	63.3
դեբետ	6.0	2.7	3.3	3.2	2.3	11.4
Պետական կառավարում	17.0	1.7	2.5	1.7	3.1	9.0
կրեդիտ	17.0	1.7	2.5	1.7	3.1	9.0
դեբետ	-	-	-	-	-	-
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և ՏՏՈՒԱԿ	28.4	5.0	8.6	12.3	16.8	42.8
կրեդիտ	34.4	7.7	11.9	15.5	19.1	54.2
դեբետ	6.0	2.7	3.3	3.2	2.3	11.4
Զուտ վարկավորում (+) զուտ փոխառություն (-) ընթացիկ և կապիտալ հաշիվներից	**-433.4**	**-56.2**	**31.5**	**-24.2**	**-410.6**	**-459.5**
3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ	**-688.5**	**-46.2**	**-27.6**	**10.3**	**-275.1**	**-338.6**
Զուտ վարկավորում (+) զուտ փոխառություն (-) ֆինանսական հաշվից	**-688.5**	**-46.2**	**-27.6**	**10.3**	**-275.1**	**-338.6**
Ուղղակի ներդրումներ	**-74.5**	**-88.6**	**-19.8**	**-130.2**	**-115.7**	**-354.2**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-27.3	12.1	12.6	-8.3	8.1	24.6
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	17.6	4.2	5.8	2.6	3.6	16.2
Բաժնետիրական կապիտալ՝ առանց վերաներդրված եկամտի	17.6	4.2	5.8	2.6	3.6	16.2
Վերաներդրված եկամուտ	-	-	-	-	-	-
Պարտքի գործիքներ	-44.9	8.0	6.8	-10.8	4.5	8.4
Զուտ պարտավորությունների ստանձնում	47.2	100.7	32.3	121.9	123.9	378.8
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	54.2	92.3	44.2	119.8	136.4	392.7
Բաժնետիրական կապիտալ՝ առանց վերաներդրված եկամտի	49.9	18.2	15.6	30.4	34.9	99.2
Ուղղակի ներդրողն ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում	49.9	18.2	15.6	30.4	34.9	99.2
Ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունը ուղղակի ներդրողի մոտ (հակառակ ներդրում)	-	-	-	-	-	-
Փոխկապակցված կազմակերպությունների միջև	0.0	-	-	-	-	-
Վերաներդրված եկամուտ	4.3	74.1	28.5	89.4	101.5	293.5
Պարտքի գործիքներ	-7.1	8.4	-11.8	2.1	-12.5	-13.9
Ուղղակի ներդրողն ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում	74.4	-17.9	27.3	-23.0	-14.3	-27.9
Ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունը ուղղակի ներդրողի մոտ (հակառակ ներդրում)	-	-	-	-	-	-
Փոխկապակցված կազմակերպությունների միջև	-81.5	26.3	-39.1	25.1	1.8	14.1
Պորտֆելային ներդրումներ	**49.4**	**-690.3**	**14.7**	**2.4**	**21.8**	**-651.4**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	43.3	16.8	22.9	3.3	31.5	74.4
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	63.4	10.9	26.7	3.3	31.5	72.3
Կենտրոնական բանկ	-	-	-	-	-	-
Ավանդային կազմակերպություններ՝ բացի կենտրոնական բանկից	-4.2	-0.1	3.1	-0.4	-2.6	0.1
Պետական կառավարում	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	67.6	11.0	23.5	3.6	34.1	72.3
Պարտքի արժեթղթեր	-20.1	5.9	-3.8	-0.0	-0.0	2.0
Կենտրոնական բանկ	-	-	-	-	-	-
Ավանդային կազմակերպություններ՝ բացի կենտրոնական բանկից	-20.2	5.9	-3.7	-0.0	-0.0	2.2
Պետական կառավարում	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	0.1	0.0	-0.1	-0.0	0.0	-0.1

1	2	3	4	5	6	7
Զուտ պարտավորությունների ստանձնում	-6.1	707.1	8.2	0.9	9.7	725.8
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	0.6	0.0	1.9	0.0	0.4	2.4
Կենտրոնական բանկ	-	-	-	-	-	-
Ավանդային կազմակերպություններ՝ բացի կենտրոնական բանկից	0.5	0.0	1.9	0.0	0.4	2.4
Պետական կառավարում	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	0.1	-	-	-	-	-
Պարտքի արժեթղթեր	-6.7	707.1	6.2	0.9	9.3	723.4
Կենտրոնական բանկ	-	-	-	-	-	-
Ավանդային կազմակերպություններ, բացի կենտրոնական բանկից	46.4	0.3	-2.4	-0.2	-1.8	-4.1
Պետական կառավարում	-53.1	706.7	8.6	1.0	11.1	727.5
Այլ հատվածներ	-	-	-	-	-	-
Ֆինանսական ածանցյալներ (բացառությամբ պահուստների) և աշխատողների ֆոնդային օպցիոններ	**-0.2**	**8.2**	**-3.2**	**3.2**	**-1.3**	**6.9**
Այլ ներդրումներ	**-385.6**	**294.9**	**-119.1**	**35.7**	**-240.9**	**-29.4**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-9.9	102.3	88.1	41.6	-206.7	25.3
Զուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնում	375.7	-192.6	207.1	6.0	34.2	54.7
Այլ կապիտալ	1.6	-0.0	-0.0	-0.1	-0.0	-0.2
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	1.6	-0.0	-0.0	-0.1	-0.0	-0.2
Զուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնում	-	-	-	-	-	-
Դրամական միջոցներ և ավանդներ	463.1	350.1	22.1	27.6	-180.5	219.3
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	181.8	114.3	152.5	-6.9	-160.8	99.1
Կենտրոնական բանկ	0.0	-0.1	-0.0	-0.0	0.1	0.0
Ավանդային կազմակերպություններ՝ բացի կենտրոնական բանկից	-170.0	67.3	52.0	36.5	-94.4	61.4
Պետական կառավարում	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	351.8	47.0	100.5	-43.3	-66.5	37.6
Զուտ պարտավորությունների ստանձնում	-281.3	-235.8	130.3	-34.5	19.8	-120.3
Կենտրոնական բանկ	0.0	-0.4	1.2	-1.1	0.6	0.3
Ավանդային կազմակերպություններ՝ բացի կենտրոնական բանկից	-281.3	-235.4	129.1	-33.4	19.1	-120.6
Պետական կառավարում	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	-	-	-	-	-	-
Վարկեր	-705.7	-57.2	-17.8	99.7	-61.6	-36.9
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռք բերում	-126.2	-33.6	-26.6	7.7	-36.9	-89.4
Կենտրոնական բանկ	-	-	-	-	-	-
Ավանդային կազմակերպություններ՝ բացի կենտրոնական բանկից	-132.6	-35.7	-23.7	13.5	-39.7	-85.5
կարճաժամկետ	-122.4	26.9	-31.7	-13.2	8.3	-9.8
երկարաժամկետ	-10.2	-62.5	8.0	26.8	-47.9	-75.7
Պետական կառավարում	-1.7	-0.4	-0.5	-0.4	-0.5	-1.8
Վարկեր և փոխառություններ ԱՄՀ-ի հետ (բացառությամբ պահուստների)	-	-	-	-	-	-
Այլ կարճաժամկետ	-	-	-	-	-	-
Այլ երկարաժամկետ	-1.7	-0.4	-0.5	-0.4	-0.5	-1.8
Այլ հատվածներ	8.1	2.5	-2.4	-5.4	3.3	-2.0
կարճաժամկետ	0.1	0.0	-0.3	-	-	-0.3
երկարաժամկետ	8.0	2.5	-2.1	-5.4	3.3	-1.7
Զուտ պարտավորությունների ստանձնում	579.5	23.6	-8.8	-92.0	24.7	-52.5
Կենտրոնական բանկ	-58.4	43.9	-30.5	10.5	-10.3	13.5
Փոխառություններ և վարկեր ԱՄՀ-ի հետ	-48.0	-1.4	-17.0	-7.3	-21.8	-47.5
Այլ կարճաժամկետ	-	-	-	-	-	-
Այլ երկարաժամկետ	-10.4	45.3	-13.5	17.8	11.4	61.0

1	2	3	4	5	6	7
Ավանդային կազմակերպություններ՝ բացի կենտրոնական բանկից	367.9	-23.8	36.8	-85.5	-51.2	-123.7
կարճաժամկետ	120.4	6.8	4.7	-116.9	-22.1	-127.6
երկարաժամկետ	247.5	-30.6	32.2	31.4	-29.1	3.9
Պետական կառավարում	188.5	-37.7	-27.5	-17.6	28.9	-53.9
Վարկեր և փոխառություններ ԱՄՀ-ի հետ	290.7	-2.7	-6.5	-2.7	-6.4	-18.3
Այլ կարճաժամկետ	0.0	-	0.0	0.0	0.0	0.0
Այլ երկարաժամկետ	-102.2	-35.0	-21.0	-14.9	35.3	-35.7
Այլ հատվածներ	81.6	41.2	12.4	0.6	57.4	111.6
կարճաժամկետ	0.2	-	-1.4	0.5	4.6	3.6
երկարաժամկետ	81.4	41.2	13.8	0.1	52.8	108.0
Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված ծրագրեր	-4.9	1.5	-0.2	-2.2	-3.3	-4.2
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-2.3	2.4	0.7	-1.9	-2.0	-0.8
Այլ հատվածներ	-2.3	2.4	0.7	-1.9	-2.0	-0.8
Զուտ պարտավորությունների ստանձնում	2.6	0.9	0.9	0.3	1.4	3.4
Այլ հատվածներ	2.6	0.9	0.9	0.3	1.4	3.4
Առևտրային վարկեր և կանխավճարներ	-103.7	-17.5	-117.0	69.1	36.4	-29.0
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-60.4	18.7	-35.5	34.7	-5.1	12.8
Կենտրոնական բանկ	-0.1	0.1	-0.1	0.4	-0.5	-0.0
Ավանդային կազմակերպություններ՝ բացի կենտրոնական բանկից	6.7	-0.3	2.7	9.8	-7.8	4.5
Պետական կառավարում	0.0	-	-	-	-	-
Այլ հատվածներ	-67.1	18.9	-38.2	24.5	3.2	8.3
Զուտ պարտավորությունների ստանձնում	43.3	36.2	81.5	-34.4	-41.5	41.7
Կենտրոնական բանկ	-0.0	0.0	-0.0	0.0	1.9	1.9
Ավանդային կազմակերպություններ՝ բացի կենտրոնական բանկից	4.5	-2.7	0.9	12.7	-2.9	8.0
Պետական կառավարում	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	38.9	38.9	80.6	-47.1	-40.5	31.9
Այլ հաշիվներ ստացվող/վճարվող	-36.1	17.9	-6.2	16.9	-31.8	-3.1
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-4.4	0.5	-3.0	8.1	-1.9	3.8
